Գիտություն

ՀՈԿՏԵՄԲԵՐ

№3 (164)

2003թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ՝ 60 ՏԱՐԵԿԱՆ



Ակադեմիկոս Հովսեփ ՕՐԲԵԼԻ
գործ՝ Գ. Վերեյսկու

Ակադեմիկոս Վիկտոր ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
գործ՝ Մ. ՍԱՐՅԱՆԻ



Ակադեմիկոս Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ
գործ՝ Ա. Գավուկի

...Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց նշանավոր պատմաբան, արևելագետ, հայագետ, մեծատառով մարդ և քաղաքացի, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին:

Գիտությունների ակադեմիայի կազմակերպման և կայացման շրջանում առաջին պրեզիդենտի ծրագիրը չափազանց հստակ էր՝ ստեղծել ժամանակակից բազմաճյուղ ակադեմիա՝ առաջնակարգ ինստիտուտներով և լաբորատորիաներով, և, ամենակարևորը՝ աճեցնել և երկիրը ապահովել երիտասարդ հեռանկարային գիտնականներով: Սա բավական դժվար խնդիր էր, քանի որ շատ երիտասարդ գիտնականներ կռվում էին Մեծ հայրենականի ռազմաճակատներում:

Սակայն Հովսեփ Օրելին, իմ կարծիքով, փայլուն լուծեց այդ խնդիրը՝ ակադեմիայի կազմում ընդգրկելով անվանի այն հայ գիտնականներին, որոնք ապրում և աշխատում էին երկրի խոշորագույն քաղաքներում՝ Մոսկվայում և Լենինգրադում:

Ակադեմիայի հիմնադիր-ակադեմիկոսների մեջ ընդգրկվեցին շատ գիտնականներ, որոնք հազիվ էին հասել քառասունամյա տարիքի, նրանք ցանկություն հայտնեցին գալ և աշխատել Հայաստանում (Ա. Ալիխանյան, Վ. Համբարձումյան):

Երեք տարվա ընթացքում շատ լուրջ և կարևոր գործեր կատարվեցին: Ակադեմիայի կայացման շրջանն էր: Ստեղծվեցին գիտությունների բաժանմունքներ, նոր ինստիտուտներ և լաբորատորիաներ, հիմնարար գրադարան, հրատարակչություն: Դրվեցին ակադեմիայի հետագա զարգացման հիմքերը: Կազմակերպվեց ակադեմիական ասպիրանտուրա, որը համալրվեց տաղանդավոր երիտասարդությամբ: Նրանք ուսումնառության առաջին իսկ օրերից սկսեցին զբաղվել գիտությամբ, կազմակերպվեցին գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամների առաջին ընտրությունները:

Այդ տարիներին վերջնականապես ձևավորվեց ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, բնական, գյուղատնտեսական, հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր ոլորտների հիմնարար հետազոտությունների ուղղությունները: Ակադեմիան դարձավ Հայաստանի մշակութային կարևորագույն կենտրոններից մեկը:

Վիկտոր Համբարձումյանի Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ ընտրվելը (1947 թ.) բախտորոշ իղողություն եղավ ինչպես Հայաստանի գիտությունների ակադեմիայի, այնպես էլ հայկական գիտության համար ընդհանրապես: Համաշխարհային մեծության գիտնականի նրա հեղինակությունը, քաղաքական բարդ իրադրություններում ճիշտ կողմնորոշվելու նրա կարողությունը, ժողովրդի սերն ու մեծարանքը նրա հանդեպ՝ արեցին իրենց գործը: Սկսվեց հայ գիտության ծաղկումը: Գիտությունը զարգանում էր ոչ միայն գիտությունների ակադեմիայում, այլև բուհերում և հանրապետության տարբեր գերատեսչությունների գիտա-հետազոտական հաստատություններում: Ինստիտուտները, բուհական ամբիոնները, լաբորատորիաները սկսեցին հարստանալ հազվագյուտ սարքավորումներով, որոնց մասին երազել իսկ չէին կարող շատ երկրների գիտնականներ:

Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը դարձավ հայկական գիտության խորհրդանիշը: Դրան գիտակցված և համոզված նպաստում էին հենց իրենք՝ հայ գիտնականները, որոնք Համբարձումյանին բացահայտ և անկեղծ համարում էին ամբողջ հայ գիտության առաջնորդը:

Եվ դա, իրոք, ճշմարտ էր, և այդ տարիներին սույն իրողությունը անկասկած շատ էր պետք հայ գիտությանը: Մեր պրեզիդենտի հեղինակության առջև բացվում էին ԽՍՀՄ պետական հաստատությունների բոլոր դռները: Եվ մեր գիտնականները օգտվում էին այդ բարենպաստ հանգամանքից:

Ես գտնում եմ, որ հետագա երեք տասնամյակներում Վիկտոր Համբարձումյանին բազմիցս վերընտրելով գիտությունների ակադեմիայի պրեզիդենդ, մեր ակադեմիկոսները շատ ճիշտ էին վարվում: Այդ մեծության և հեղինակության այլ թեկնածու մենք, հիրավի, չունեինք:

1993-ին գիտությունների ակադեմիայի երկրորդ պրեզիդենտը գնաց հանգստի: Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով Վիկտոր Համբարձումյանը դարձավ գիտությունների ակադեմիայի պատվավոր պրեզիդենտ: Այդ որոշումը սրտանց ողջունեցին հանրապետության բոլոր իսկական գիտնականները:

Ակադեմիական կյանքը, սակայն, շարունակվում էր: Առաջ եկավ գիտությունների ազգային ակադեմիայի նոր պրեզիդենտի ընտրության հարցը: Թեկնածուների պակաս չկար: Իրենց թեկնածուն ունեին նաև հանրապետության ղեկավարները:

Ինչպես հայտնի է, ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնի համար ես պաշտպանում էի ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի թեկնածությունը:

Մենք՝ բոլորս՝ Ֆադեյ Սարգսյանի գործընկերները, տասնամյակներ շարունակ աշխատել էինք նրա հետ, գիտեինք և համոզված էինք, որ հանձին Ֆ. Սարգսյանի մենք գործ ունենք խոշոր ճարտարագետ-գիտնականի, գիտության, գիտական արտադրության կազմակերպչի, բազմափորձ ղեկավարի, ճկուն և հմուտ քաղաքագետի ու պետական գործչի հետ: Եվ ամենագլխավորը, հանձինս Ֆադեյ Սարգսյանի, մենք միշտ գործ ունեինք բարի և զգայուն անհատականության հետ: Գաղտնի քվեարկության արդյունքում Հայաստանի գիտությունների ակադեմիայի երրորդ պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Ֆադեյ Տաճատի Սարգսյանը: Կյանքը ցույց տվեց, որ ընտրության հարցում մենք չենք սխալվել:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտի և գիտությանը իրապես նվիրված գիտնականների գերագույն ճիգերի և գործունեության շնորհիվ Գիտությունների ակադեմիան պահպանվեց, այն չկորցրեց իր դեմքը և շարունակում է իր պատվավոր տեղը զբաղեցնել մոլորակի գիտությունների ակադեմիաների համագործակցության մեջ:

Նյութերը քաղված են են ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ «Ակադեմիական գիտությունը Հայաստանում» գրքից:

ԱԿԱԴԵՄԻԱՆ ԱՅՍՕՐ

Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան թևակոխեց իր 60-ամյակը:

Հիմնադրվելով 1943 թ. նոյեմբերին՝ Հայրենական մեծ պատերազմի ծանր տարիներին, ակադեմիան իր հետազոտություններով, մշակումներով և հրապարակումներով արժանի ավանդ ներդրեց գիտության զարգացման ապահովման, երկրի պաշտպանունակության ամրապնդման, ժողովրդական տնտեսության վերականգնման գործում: Հիմնադրման առաջին իսկ օրից ակադեմիայում ձևավորվեցին Հայաստանի բարձրագույն գիտական հաստատությանը արժանի ավանդույթներ ու գիտական ուղղություններ, որոնք շարունակվել և հետագա զարգացում են ստանում նաև այսօր՝ պահպանելով հանրապետության գիտատեխնիկական, կրթական և հոգևոր ներուժի բարձր մակարդակը:

Հետպատերազմյան շրջանում ակադեմիան իր աշխատանքները ծավալեց ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան և շատ արագ հասավ համաշխարհային մակարդակի գիտական արդյունքների:

Այս տարիներին, իրավամբ, ակադեմիայում ստեղծվել են հանրահայտ գիտական դպրոցներ, ձևավորվել է նյութատեխնիկական հզոր բազա, զարգացել են ինչպես ամբողջ Խորհրդային Միության, այնպես էլ մեր հանրապետության տնտեսության համար հույժ կարևոր հիմնարար և կիրառական գիտական ուղղություններ, պատրաստվել են բարձրորակ կադրեր, հիմնադրվել են գիտական մի շարք հաստատություններ, կազմավորվել են բազմաթիվ բուհական ֆակուլտետներ: Ակադեմիան մեծապես նպաստել է ոչ միայն մեր հանրապետության, այլ նաև նախկին Խորհրդային Միության մյուս տարածաշրջանների արդյունաբերական պոտենցիալի զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմությունը երկրի ժողովրդական տնտեսության, սոցիալական և մշակութային ոլորտների, պաշտպանունակության զարգացման գործում գիտության բոլոր ուղղությունների առաջատար դերի պատմությունն է:

Հայաստանի հետխորհրդային շրջանի առաջին տարիներից գիտնականների կարևորագույն խնդիրը դարձավ հանուն երկրի մտավոր ներուժի պահպանման պայքարը: 1991 թ. ԽՍՀ փլուզումը, նորանկախ երկրների կազմավորումը, բազմակողմ տնտեսական, գիտական, մշակութային և այլ կապերի թուլացումը կամ խզումը, տնտեսության բնագավառում սկսված արմատական վերափոխումները հանգեցրին խորը ճգնաժամի Հայաստանի Հանրապետության կենսագործունեության բոլոր ոլորտներում:

Աղետալի երկրաշարժի, Հայաստանի տևական շրջափակման, սուր էներգետիկ ճգնաժամի և մի ամբողջ շարք չմտածված, գիտականորեն չհիմնավորված վերակազմավորումների հետևանքով փլուզվեց տնտեսությունը, քայքայվեցին հասարակության բարոյական հիմքերը, աճեց սոցիալական բևեռացումը: Այդ ամենը իրական նախադրյալներ ստեղծեց գիտական ներուժի էական կրճատման համար: Գիտության և առաջին հերթին հիմնարար գիտության, ֆինանսավորման կտրուկ կրճատված ծավալները ակադեմիան կանգնեցրին հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքում առաջատարի իր կարգավիճակը կորցնելու վտանգի առջև:

Այս համատեքստում ակտիվ քննարկումներ ծավալվեցին ընդհանրապես գիտության և մասնավորապես ակադեմիական գիտության ճակատագրի շուրջ:

Մինչև վերջին ժամանակները հայ գիտնականները բավարար հիմքեր չունեին համարելու, որ պետական մակարդակում մեր երկրի զարգացման գործում գիտության որոշիչ դերը ընկալվում է համարժեք կերպով: Դեռ ավելին, ակադեմիայի և հիմնարար գիտության պահպանման անհրաժեշտության բուն փաստը, հատկապես անկախության առաջին տարիներին, մեկ անգամ չէ, որ կասկածի տակ է դրվել: Դիտարկվում էին գիտության ոլորտում արմատական վերակառուցումների այնպիսի հնարավորություններ, որոնք կարող էին ունենալ աղետալի հետևանքներ:

«Բարենորոգիչները» առաջարկում էին գիտության, այդ թվում և ակադեմիայի վերակազմավորման զանազան տարբերակներ՝ առանց հաշվի առնելու ձևավորված իրողությունները, պատմական ավանդույթները և բազմաթիվ այլ գործոններ: Պնդում էին, որ գիտությունը պահանջում է չափազանց շատ միջոցներ, որ այսպիսի ոչ մեծ հանրապետության համար պետք չէ «մեծ գիտություն», առաջարկում էին ակադեմիական ինստիտուտները հանձնել բուհերին, վկայակոչում էին արտասահմանյան մի շարք երկրների փորձը, որոնք «առանց գիտության էլ են բարգավաճում» և այլն:

Կազմավորված կառույցների «հեղաշրջում» կատարելու փորձերը, հապճեպ բարեփոխումները, որոնք չէին բխում տարբեր տնտեսական համալիրների փոխներգործության տնտեսական և իրավական մեխանիզմների էությունից, նախորոշում էին գիտության փլուզման գործընթացներ, որոնց հասցրած վնասները ճակատագրական կդառնային մեր հասարակության և պետության հետագա առաջընթացի համար, կհանգեցնեին ազգային մասշտաբով աղետալի հետևանքների:

Այդ տարիներին գիտությունը չէր ստանում անհրաժեշտ պետական աջակցություն: Գիտության ֆինանսավորման ծավալների կրճատումները սկսեցին ստանալ պարբերական բնույթ: Նրա մակարդակը պետբյուջեի ծախսերի մասով իջավ մինչև 1 տոկոսի: Զգալիորեն նվազեց գիտաշխատողների քանակը:

Ակադեմիան զրկվեց հիմնարար գիտության բնագավառում միասնական քաղաքականություն վարելու, իր ներուժի նպատակաուղղված վերակողմնորոշումն ապահովելու, նոր գիտական ուղղություններ նախանշելու, ինստիտուտներին կազմակերպական և ֆինանսական գործուն աջակցություն ցուցաբերելու, որոնողական հետազոտությունները խթանելու հնարավորությունից:

Նման «նորամուծությունները» ավելի խճճեցին իրավիճակը գիտատեխնիկական ոլորտում: Տնտեսական անկումը, կառավարման համակարգերի վերակառուցումը, գիտական աշխատանքի հեղինակազրկվելը, գիտնականների նյութապես աղքատացումը, գիտության ֆինանսական և նյութական բազայի կրճատումը, «տեղեկատվական քաղցը», «ուղեղների արտահոսքը», գիտական հետազոտությունների արդյունքների պահանջարկի բացակայությունը առաջադրեցին հանրապետության գիտության զարգացման ռազմավարության ընտրության հիմնախնդիրը:

1993 թ. փոխվեց ակադեմիայի ղեկավարությունը:

Սուր տնտեսական ճգնաժամի պայմաններում ակադեմիայի գործունեության նոր ծրագիրը նախատեսում էր լուծել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին ակադեմիայի ներգրավելը միջազգային և ներհանրապետական գիտական համագործակցության մեջ, հիմնարար հետազոտությունների թեմատիկայի վերանայումն ու ճշգրտումը գերակա ուղղությունների առանձնացմամբ, գիտական կադրերի վերարտադրությունը, գիտության կառավարման համակարգի բարելավումը, գիտության զարգացման օրենսդրական դաշտի ստեղծմանն աջակցելը և այլն:

ՀՀ ԳԱԱ նախագահության նոր կազմի առաջնահերթ խնդիրներից մեկը ակտիվորեն ակադեմիայի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ հայթայթելն էր՝ մասնավորապես միջազգային կապերն ընդարձակելու ճանապարհով:

Անտարակույս, ակադեմիայի ֆինանսավորման և նրա ինստիտուտների կենսագործունեության ապահովման առանձին խնդիրների լուծման մեջ գլխավոր դերը պատկանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Դրա հետ մեկտեղ ակադեմիային օգնեց միջազգային գիտական հիմնադրամների, միջազգային հայկական և այլ բարեգործական կազմակերպությունների և առանձին հովանավորների հետ ընդլայնվող համագործակցությունը: Ակադեմիայի գիտնականները սկսեցին ավելի շատ դրամաշնորհներ շահել միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, գիտական աշխատությունների հրատարակման, նոր գիտական սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում: Դրանց շնորհիվ ապահովվեց մի շարք ինստիտուտների գիտական սարքավորումների, կապի և գիտական հետազոտությունների հետ կապված այլ հարցեր:

Այսպես, Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի միջոցների հաշվին ձեռք բերվեցին գիտական սարքավորումներ, հրատարակվեցին գիտական աշխատություններ, արդիականացվեցին տպագրական միջոցները, ակադեմիայի նախագահության և մոտակա գիտական կազմակերպությունների կաթսայատունը և այլն: Գալուստ Կյուլպենկյան հիմնադրամի և Հայ բարեգործական ընդհանուր միության զգալի օգնության շնորհիվ ակադեմիան ստացավ ժամանակակից համակարգչային և այլ տեխնիկական միջոցներ:

Հայոց եկեղեցին մշտապես հոգացել և հովանավորել է գիտությունը և մշակույթը: Միանգամայն օրինաչափ է, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, ինչպես և նրան նախորդած Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոսներն ընտրվել են ՀՀԳԱԱ պատվավոր ակադեմիկոսներ:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան միշտ մեծ երախտագիտությամբ կնշի այդ կազմակերպությունների զգալի օգնությունը և առանձին անձանց՝ Լուիզ Սիմոն Մանուկյանի, Միքայել Եսայանի, Զավեն Եկավյանի, Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի, Սենիկ Գևորգյանի, Արա Աբրահամյանի, Հրանտ Վարդանյանի, Լևոն Չախմախչյանի անունները, որոնք հայկական գիտության համար ծանր ժամանակներում ակտիվ մասնակցություն ունեցան օգնության բազմաթիվ ծրագրեր իրականացնելու գործում:

Հայաստանի գիտության զարգացման ճանապարհին էական խոչընդոտ էր գիտության վերաբերյալ հստակ օրենսդրական դաշտի բացակայությունը:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թ. ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքում (հետագայում՝ Օրենք) նշված է, որ գիտատեխնիկական ներուժի պահպանումն ու զարգացումը դիտվում են որպես ՀՀ անկախության և ազգային անվտանգության ամրապնդման կարևոր գործոններ:

Ընդունելով ակադեմիայի կարևոր դերը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման, գիտատեխնիկական քաղաքականության մշակման և իրականացման ասպարեզում՝ Օրենքը ամրագրեց նրա՝ հանրապետության բարձրագույն գիտական կենտրոնի կարգավիճակը, որն իրականացնում է հանրապետությունում հիմնարար հետազոտությունների համակարգումն ու փորձաքննությունը և կառավարության պաշտոնական գիտական խորհրդատուի գործառույթներ: Ակադեմիան մասնակցում է հանրապետության գիտատեխնիկական քաղաքականության սկզբունքների մշակմանը, պետական գիտական ծրագրերի ստեղծմանը, բարձրագույն դպրոցի և գիտության ինտեգրմանը:

Ակադեմիայի նոր կանոնադրության ընդունումից հետո կառուցվածքային փոփոխություններ են կատարվել ակադեմիայի նախագահությունում: Կառավարման ավելի ճկուն և գործուն համակարգ ստեղծելու նպատակով հիմնվել են երկու փոխպրեզիդենտի պաշտոններ (նախկին երեքի փոխարեն), որոնցից մեկը զբաղվում է միջազգային գիտական համագործակցության կազմակերպման հարցերով: Նախատեսված են ակադեմիական ինստիտուտների և նրանց ներքին կառուցվածքի վերակազմավորման մի շարք միջոցառումներ:

Անհրաժեշտ է նախաձեռնել նոր քայլեր բարձրագույն դպրոցի հետ ակադեմիայի ինտեգրման, բուհերում մասնագիտական կրթության մակարդակի բարձրացման ուղղությամբ, այդ թվում՝ շնորհալի երիտասարդների որակապես նոր բուհական պատրաստման կազմակերպումը հատուկ ծրագրերով՝ օգտագործելով ուսուցման նոր մեթոդներ, բուհական պատրաստման փուլում նրանց ներգրավելով գիտական աշխատանքի մեջ:

Կադրային քաղաքականության հիմք պետք է լինի մասնագետների պատրաստումը գիտատեխնիկական և հիմնարար գերակա ուղղություններով: Պահանջվում է գիտական կադրերի երիտասարդացում և որակավորման հետագա բարձրացում մի շարք գիտական ուղղությունների գծով:

Ակադեմիայի խնդիրներից է ակադեմիայի գիտնականների սոցիալական պաշտպանվածության ապահովման ծրագրերի մշակումը:

Ակադեմիական գիտության դժվարությունները լիովին վերաբերում են նաև հանրապետության բուհերին, առաջին հերթին՝ Երևանի պետական հասալսարանին և Երևանի ճարտարագիտական համալսարանին, որոնցում հիմնարար գիտությունը ներկայացված է լայնորեն: Հայաստանի գիտնականները գիտության ապագան տեսնում են հայագիտության, մաթեմատիկայի, մեխանիկայի, աստղաֆիզիկայի, ֆիզիոլոգիայի բնագավառներում միջազգային ճանաչում ունեցող գիտական դպրոցների անվերապահ պահպանման և զարգացման մեջ: Գիտության համապատասխան բնագավառներում շեշտը առաջին հերթին պետք է դրվի բարձր տեխնոլոգիաների զարգացումն ապահովող հիմնարար հետազոտությունների համալիրի վրա: Խոսքը վերաբերում է տեղեկատվական տեխնոլոգիաներին, արտադրական, մասնավորապես՝ լազերային տեխնոլոգիաներին, ոչ ավանդական եղանակների կիրառմամբ լեռնահանքային և տեխնածին հումքի խորը վերամշակման տեխնոլոգիային, կենսատեխնոլոգիային և այլն: Հայաստանում այս բնագավառում կատարվել են բավականին աշխատանքներ, որոնք պահանջում են պետության անմիջական աջակցությունը:

Համաշխարհային միտումների ազդեցությամբ վերջին տարիներին Հայաստանում սկսել է հատուկ տեղ զբաղեցնել մոլեկուլային կենսաբանության (գենային ինժեներիա), ինֆորմատիկայի և համակարգչային ցանցերի, բնապահպանության, էներգետիկայի հիմնախնդիրների հետազոտությունը:

Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում կարևորվում է բախումնաբանության, տնտեսության կառավարման և Հայաստանի համար հույժ կարևոր՝ ժողովրդագրական գործոնի հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Արդի պայմաններում հատուկ նշանակություն է ձեռք բերում երկրի ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրը: Ազգային անվտանգությունը, որը նախկինում հավասարեցվում էր միայն ռազմական անվտանգությանը, այժմ կապված է նաև տնտեսական հզորության, գիտության և կրթության բարձր մակարդակի, տեղեկատվության անվտանգության, անվտանգության պարենային, կենսաբանական և այլ ձևերի հետ, ինչը պահանջում է լայն միջգիտական մոտեցում այդ խնդրի լուծմանը:

Վերջերս ակադեմիա այցելեց Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Մենք այդ այցը դիտում ենք որպես առաջիկա դրական փոփոխությունների նշան և պետության ու գիտության սերտ համագործակցության սկիզբ: Նախագահը նաև ցուցաբերեց գիտնականների խնդիրների ըմբռնողություն: Նրա խոսքերը՝ «Մենք հռչակել ենք կազմակերպված պետության կառուցման գաղափարը: Հայաստանը պետք է ունենա ժամանակակից գիտական նվաճումների վրա հիմնված արդյունաբերություն, տարածաշրջանում դառնա գիտական մտքի կենտրոն», մեծ հույսեր են մեզ ներշնչում:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան եղել և շարունակում է մնալ այն մտավոր կենտրոնը, որը խթանել է հանրապետության գիտական, տնտեսական և մշակութային զարգացումը: Իր գոյության ամբողջ ժամանակահատվածում ակադեմիան վաստակել է իր կարգավիճակը:

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 60-ամյակը պարտավորեցնող է: Այն ոչ միայն հարգանքի տուրք է գիտության երախտավորներին, անցյալի արարումներին, այլ նաև նոր մեկնարկ՝ հայկական ակադեմիական գիտությունը նոր բարձունքի հասցնելու համար:

ՀՀ ԳԱԱ հիմնադրման 60-ամյակը պետք է դառնա Հայաստանի գիտության իսկական վերածննդի խորհրդանիշը:

Տպագրվում է կրճատումներով:

Վստահված է հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիային

Սևանա լիճը, որը բնության հրաշալիքներից է և Հայաստանի խորհրդանիշներից մեկն է, ունի հանրապետական և տարածաշրջանային բացառիկ տնտեսական և ռազմավարական նշանակություն:

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման տարբեր փուլերում Սևանա լճի ջրային ռեսուրսների օգտագործումը մեծ զարկ է տվել հանրապետության էներգետիկ ռեսուրսների հզորացմանը, ոռոգելի հողատարածությունների ընդլայնմանը, արդյունաբերության զարգացմանը, բնակչությունը կենսառեսուրսներով ապահովմանը, և ռեկրացիոն գործընթացների ընդլայնմանը: •

Իհարկե, տնտեսական այս բոլոր առաջընթացները ձեռք են բերվել Սևանա լճի ջրային ռեսուրսների քանակի նվազեցման և որակի վատացման հաշվին՝ լճի ծավալը պակասել է 42 %-ով, հայելու մակերեսը՝ 12 %-ով, խորությունը՝ 15 մետրով և խախտվել է էկոհամակարգի հաշվեկշիռը:

Սևանա լիճը իր ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկանիշներով հանդիսանալով խմելու ջրի տարածքային «Ջրամբար» և ունենալով եզակի հարուստ ֆլորա և ֆաունա, 60 տարիների ընթացքում չէր կարող մնալ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ուշադրությունից դուրս և անպաշտպան:

Հայաստանի Հանրապետության ԳԱԱ մասնակցությամբ՝

- 1980-85 թվականներին մշակվեց «Սևանա լճի բնական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և արդյունավետ օգտագործման» համալիր ծրագիր
- ԳԱԱ-ի կազմում գործում է «Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ»-ը
- Ոռոգման նպատակներով շուրջ 5 անգամ պակասեցվեցին Սևանա լճից ջրի բացթողումների ծավալները
- Մշակվեց և 2001 թվականին հանրապետության նախագահի կողմից հաստատվեց օրենք «Սևանա լճի մասին»
- 2001 թվականին ԳԱԱ կազմում ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի ղեկավարությամբ ստեղծվեց «Սևանա լճի պահպանության» փորձագիտական հանձնաժողով՝
- 1995 թվականին մշակվեց համալիր ծրագիր «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների», որի հիման վրա ԳԱԱ «Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի» հսկողությամբ մշակվում և իրականացվում են տարեկան ծրագրեր:

«Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով»-ը, համալրված լինելով փորձառու, բարձր որակավորում ունեցող մասնագետներով, նրա նախագահ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանի ղեկավարությամբ, ջանք չեն խնայում աջակցելու Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման խնդիրների լուծման գործընթացներին՝

- Մշակվել և առաջարկություններ են ներկայացվել ՀՀ վարչապետին «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների» համալիր ծրագրի իրականացման գործընթացներին նպաստելու նպատակով:
- Բացահայտվել և առաջարկություններ են ներկայացվել ՀՀ վարչապետին՝ Սևանա լճի առափնյա տարածություններում թույլ տրված անօրինականությունները կանխարգելելու համար
- ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ համատեղ մշակվել է «Սևանա լճի էկոհամակարգի բնօգտագործման և բնական միջավայրի պահպանության համապատասխան ռեժիմի սահմանման» կարգի նախագիծը:
- Հանձնաժողովի ներկայացուցիչները ակտիվ մասնակցում են Որոտան-Սևան թունելային ջրատար համակարգի շինարարության և շահագործման խնդիրների լուծման համար միջոցառումների մշակման և իրականացման գործընթացներին:

Հանձնաժողովը օր-օրի իր գործունեությունը դարձնելով ավելի հետևողական, ձգտում է վերահսկել տրված փորձագիտական եզրակացությունների կիրառման գործընթացները՝ ի նպաստ Սևանա լճի էկոհամակարգի բարելավմանը և պահպանմանը:

Բանավեճից հետո...

Гости юбилея

Осипов Юрий Сергеевич

Академик, президент Российской академии наук

Родился 7 июля 1936 г. в г. Тобольске. Окончил физико-математический факультет Уральского государственного университета (1959).

Кандидат физико-математических наук (1965), доктор физико-математических наук (1972). Профессор. Заведующий кафедрой оптимального управления факультета вычислительной математики и кибернетики. Директор Математического института им. В.А.Стеклова РАН.

Действительный член АН СССР (1987, член-корреспондент с 1984). Президент РАН (1992).

Лауреат Ленинской премии (1976). Награжден орденом Трудового Красного Знамени (1981).

Область научных интересов: обратные задачи, управляемые процессы, математическое моделирование, дифференциальные игры.

Читает курсы лекций «Обратные задачи - алгоритмы динамического восстановления», «Прикладная теория управления», «Дифференциально-разностные игры».

Опубликовал более 90 научных работ.

ՅՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները

2003 թվականի սեպտեմբերի 15-20-ին Երևանում գումարվեց «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային առաջին համաժողովը, որն ընդգրկված էր Գիտությունների ազգային ակադեմիայի 60-ամյա հոբելյանի միջոցառումների շրջանակում:

Լիագումար նիստը (բացումը) տեղի ունեցավ սեպտեմբերի 15-ին, ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում: ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանի բացման խոսքից հետո հրապարակվեց հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի ուղերձը: Համաժողովի մասնակիցներին հայրապետական օրհնության խոսք ասաց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը: Լիագումար նիստին լսվեցին երկու հիմնական զեկուցումներ: «Հայագիտության արդի վիճակը ՀՀ-ում և զարգացման հեռանկարները» (ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյան) և «Հայագիտության արդի վիճակը, արտասահմանում և զարգացման հեռանկարները» (Ռիչարդ Հովհաննիսյան, ԱՄՆ):

Համաժողովի աշխատանքները շարունակվեցին Պատմության, Բանասիրության, Մշակույթի, Հայոց եկեղեցին և հայագիտությունը մասնաճյուղերում, ինչպես նաև Աղբյուրագիտության, Փիլիսոփայության, Արվեստագիտության ենթամասնաճյուղերում: Առանձին քննարկումներ ծավալվեցին «Հայկական ինքնության խնդիրը և հայապահպան գործունեությունը Սփյուռքում» և «Կրթության հիմնախնդիրը Սփյուռքում և Հայաստանում» խնդիրների շուրջը:

Համաժողովի ընթացքում լսվեցին բազում ուշագրավ և հետաքրքիր զեկուցումներ հայագիտության ամենատարբեր բնագավառների շուրջը. Հայաստանի, Սփյուռքի և օտարազգի գիտնականները յուրովի ներկայացրին Հայագիտության արդի վիճակը և նրա առջև ծառացած կարևորագույն խնդիրները:

Համաժողովի լիագումար եզրափակիչ նիստում արձանագրվեց միջազգային առաջին հայագիտական համաժողովի արդյունավետ և օգտակար աշխատանքը, կազմակերպվածությունը, նրա նշանակությունը հայագիտության զարգացման գործում, արվեցին կարևոր առաջարկներ:

Համաժողովը ընդունեց բանաձև, որը ըստ էության հայագիտության հետագա զարգացման և անելիքների գործող ծրագիր պիտի հանդիսանա առաջիկա տարիների համար:

Երբ առնչվում ես ողբերգությանը

Գիրքը, որ դուք բացել եք, գրված է մի մարդու կողմից, որը ճակատագրի կամոք հայտնվել էր 20-րդ դարի ամենադրամատիկ իրադարձություններից մեկի՝ Հայաստանում 1988 թվականի դեկտեմբերյան երկրաշարժի կիզակետում: Տարերքի դաժան, նախադեպը չունեցող հարվածը անսպասելի էր և անողոք: Առանց չափազանցության Անդրկովկասում դա ամենահզոր երկրաշարժն էր, ստորգետնյա հարվածների ուժգնությունը Ռիխտերի սանդղակով գերազանցեց 10,5 բալը: Այդ երկրաշարժի արձագանքը լսելի է նույնիսկ այսօր, երբ մարդկությունը թևակոխել է արդեն 21-րդ դար:

Ձեզ եմ ներկայացնում գրքի հեղինակին՝ Լևոն Խորենի Չախմախչյան՝ «ТВ 6 Волна» հեռուստահաղորդումների կենտրոնի և «ТВ-6 Медия» գործակալության գլխավոր տնօրեն: Նա զբաղվում հասարակական և քաղաքական բուռն գործունեությամբ՝ Ռուսաստանի Սվյատոսլավ Ֆյոդորովի անվան ինքնակառավարման կուսակցության Բարձրագույն խորհրդի նախագահն է և «Ռոսիա» շարժման Քաղաքական Խորհրդի նախագահի առաջին տեղակալը:

Սա բազմափորձ լրագրող, մամուլում հաջողությամբ և հաճախ տպագրվող Լևոն Չախմախչյանի առաջին գիրքը չէ: Նա գործնական աշխատանքի լուրջ փորձ է կուտակել Հայաստանի կոմկուսի Կենտկոմում, ԽՄԿԿ Կենտկոմում, ԽՍՀՄ պրեզիդենտի աշխատակազմում և Ռուսաստանի Դաշնության կառավարությունում աշխատած տարիներին:

Լ. Խ. Չախմախչյանը փաստորեն ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի երկրաշարժի հետևանքների վերացման նպատակով ստեղծված հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն էր: Նա բազմիցս եղել է հարազատ հանրապետության հիմնովին կործանված քաղաքներում և գյուղերում, հանդիպել այդ համաժողովրդական ողբերգության հարյուրավոր-հազարավոր ականատեսների և մասնակիցների հետ: Նրա ձեռքով են անցել ողբերգության ընդհանուր պատկերը ներկայացնող հազարավոր փաստաթղթեր, որոնք պատմում էին հերոսություն և տոկունություն, անձնազոհություն և անօրինակ կամքի ուժ ցուցաբերած մարդկանց մասին:

Հայաստանյան երկրաշարժից երկար տարիներ հետո միայն Լ. Խ. Չախմախչյանը գրիչ վերցրեց՝ զուտ փաստագրական գիրք գրելու այն դրամատիկ իրադարձություններ

ի մասին, որոնք ժամանակի հայ պատմությունը բաժանեցին երկու անհավասար մասերի՝ ահավոր տարերքի մոլեգնության «մինչև» և «հետ» շրջանների:

Հեղինակին կարելի է հասկանալ. նման մեծության աղետը հապճեպ նկարագրություն և մակերեսային մոտեցում չի հանդուրժում:

1988-ին, լինելով «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի գլխավոր խմբագիրը, ես լավ եմ հիշում ողջ երկիրը ցնցող լուրերն ու հաղորդումները Հայաստանյան ողբերգության մասին: Զոհերի թիվը և ավերածությունների ծավալները վիթխարի և անչափելի էին:

Շատ-շատերին այն ժամանակ թվում էր, որ աղետը ոչնչացրել է արևոտ Հայաստանը, և երկիրը այլևս ավերակներից չի հառնի: Սակայն հանրապետությունը դիմացավ և ապրեց: Դա հրաշքի էր նման: Եվ այդ հրաշքը իրականացրին հայ ժողովրդի հերոսականությունը, ԽՍՀՄ ժողովուրդների եղբայրական օգնությունը, աշխարհի երկրների մեծ մասի, մոլորակի միլիոնավոր մարդկանց աջակցությունը:

Նոր ժամանակների և հանգամանքների ազդեցության տակ այսօր մենք թերևս երբեմն-երբեմն և վերապահումով ենք խոսում ժողովուրդների բարեկամության կենարար ուժի, անշահախնդիր օգնության և աջակցության մասին: Հեղինակը ամեն մի տողում կոչ է անում պահպանել այդ անգնահատելի գանձը, որն առատորեն ցողված է ավագ սերունդների քրտինքով և արյունով: Դա շատ անհրաժեշտ է մանավանդ հիմա, երբ ոչ թե բնության արհավիրքները, այլ քաղաքական տարերքներն են ավերիչ հարվածներ հասցնում պատմությամբ սրբացված դարավոր կապերին և ավանդույթներին:

Հեղինակը գիրքը ավարտում է այն ճշմարիտ խոսքերով, թե կյանքը առհավետ իրար է կապել Հայաստանի և Ռուսաստանի ճակատագրերը:

Լ. Խ. Չախմախչյանի գիրքը պարզապես հուշ չէ, այն ցավի և հիշողության համաձուլվածք է, կոչ բոլոր-բոլորին՝ միասին հարգել անցյալը, այս փխրուն կյանքը պահպանել ներկա ժամանակներում և հավատալ ապագային:

Գենադի ՍԵԼԵԶՆՅՈՎ
Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Պետական դումայի նախագահ, «Ռոսիա» շարժման առաջնորդ

Гости юбилея



Патон Борис Евгеньевич

Ученый в области металлургии и технологии металлов, профессор, доктор технических наук, академик АН СССР (1962,РАН - с 1991), академик НАН Украины (1958); чл.-корр. (1951). Президент НАН Украины с 1962 года. Родился в Киеве. Окончил Киевский политехнический институт (1941). С 1942 работает в Институте электросварки (с 1944 -зав.отделом, с 1950 - зам.директора, с 1953 -директор ИЭС им.Е.О.Патона). Чл.Президиума АН СССР с 1963.

Научные исследования посвящены процессам автоматической и полуавтоматической сварки под флюсом, разработке теоретических основ создания автоматов для сварки и сварочных источников питания; проблеме управления сварочными процессами. Под его руководством создан принципиально новый способ сварки - электрошлаковый. Возглавил исследования по применению сварочных источников теплоты в целях повышения качества выплавляемого металла, основал спецэлектрометаллургию.

Академик Б.Е.Патон первым начал и активизировал исследования в области сварки в космосе и создания космических конструкций.

Б.Е.Патон является Президентом Международной ассоциации академий наук, почетным Президентом Международной инженерной академии, членом Европейской академии, Международной академии технологических наук, почетным членом Международной академии наук, образования, индустрии и искусства, Международной астронавтической академии, Римского клуба, иностранным членом академий и научно-технических обществ многих стран.

Դրվագներ պատմությունից

ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտը առաջիններից էր, որ մտավ 1943 թվականին ստեղծված ակադեմիայի կազմի մեջ:

Պատերազմի ավարտից հետո կրկին եղա կենդանաբանության ինստիտուտում: Պարզվեց, որ 1948 թվականին կենդանաբանության ինստիտուտին միացվել է երկրագործության ինստիտուտի բույսերի պաշտպանության բաժինը, և ինստիտուտը կոչվում է գիտությունների ակադեմիայի ֆիտոպատոլոգիայի և կենդանաբանության ինստիտուտ:

1948 թվականին ես դարձա այդ ինստիտուտի ասպիրանտը: Իմ ղեկավարն էր ինստիտուտի տնօրեն Գ. Մ. Մարջանյանը: Աշխատանքի պրոցեսում մեծ օգնություն ստացա պրոֆեսորներ Ա. Ա. Ռիխտերի, մ. Ե. Տեր-Մինասյանի, կ.գ.թ., Ն. Ն. Ակրոմովսկու և այլ մասնագետների կողմից:

1952 թվականին, օգոստոսյան սեսիայից հետո, ինստիտուտի բույսերի պաշտպանության բաժինը առանձնացավ և դարձավ գիտությունների ակադեմիայի բույսերի պաշտպանության ինքնուրույն սեկտոր: Վերջինս հետագայում հիմք դարձավ գյուղնախարարության բույսերի պաշտպանության ինստիտուտի ստեղծման համար:

Այդ ժամանակ էլ վերականգնվեց կենդանաբանական ինստիտուտի նախկին անունը, որի տնօրեն նշանակվեց Երևանի կենդանաբանական այգու տնօրենը: Ինստիտուտը տեղափոխվեց նորակառույց շենք և շարունակեց գործել որպես ակադեմիայի մեծ ինստիտուտներից մեկը:

Ինստիտուտում աշխատել են բազմավաստակ գիտնականներ: Թվենք նրանցից մի քանիսին՝ Մ. Ե. Տեր-Մինասյան, Ա. Ա. Ռիխտեր, Ս. Կ. Յաբլոկով-Խնձորյան (կարծրաթևերի մասնագետներ), Հ. Ե. Տերտերյան (երկթևերի), Ս. Ա. Վարդիկյան (թիթեռների), Ն. Ն. Ակրոմովսկի (ճպուռների), Ա. Տ. Բաղդասարյան, Է. Հարությունյան (տզերի), Մ. Ա. Տեր-Գրիգորյան (կոկտիդների), Ս. Կ. Դալ, Պ. Պ. Ղամբարյան, Մ. Կ. Ադամյան (ողնաշարավոր կենդանիների), Ե. Ա. Դավթյան, Կ. Հ. Հախումյան (պարազիտ որդերի) և շատ ուրիշներ, որոնցից շատերը, ցավոք, մեզ հետ չեն:

Նշված և այլ մասնագետների կողմից գրվել են հարյուրավոր գիտական աշխատություններ, մենագրություններ, գրքեր, լայնածավալ աշխատություններ և այլն, որոնցում բացահայտված են Հայաստանի կենդանական աշխարհի առանձին խմբերի տարածման գոտիները, տեսակերպը, էկոլոգիան, ծագումը և շատ այլ տվյալներ, ինչպիսիք նշված են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև շատ երկրներում: Դրանցից շատերը լայնորեն օգտագործվել են և օգտագործվում են աշխարհի ֆաունայի մասին և այլ աշխատությունների էջերում:

Նշենք նաև, որ կենդանաբանության ինստիտուտի աշխատակիցների հետ միասին աշխատել և աշխատում էին նաև Ռուսաստանի և այլ երկրների համալսարանների ինստիտուտների բազմաթիվ մասնագետներ:

Այսօր, ԳԱԱ 60-ամյա հոբելյանի օրը, արժանի են հիշատակվելու կենդանաբանական ինստիտուտի բազմավաստակ տնօրենների անունները՝ Վ. Հ. Գուլբանյան, Մ. Ե. Տեր-Մինասյան, Գ. Մ. Մարջանյան, Ա. Սարգիսով, Հ. Ս. Ավետյան, Ա. Հ. Չիլինգարյան, Ս. Մ. Սարգսյան, անուններ, որոնք հավերժ կմնան ինստիտուտի պատմության մեջ:

Այսօր ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության ինստիտուտը ղեկավարում է բազմավաստակ գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Հ. Սովսիսյանը:

Ակադեմիայի հոբելյանի առթիվ շնորհավորում եմ Կենդանաբանության ինստիտուտի աշխատակազմին, ցանկանում նրանց քաջառողջություն, նորանոր հաջողություններ գիտության մեջ, աշխատանքում և կյանքում:

Սամվել ՄԻՐԶՈՅԱՆ
Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ»

Սեպտեմբերի 26-ին Երևանում ավարտվեց «Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ» 4-րդ միջազգային գիտաժողովը: Այն մեծ հետաքրքրություն էր առաջացրել հայ գիտական հասարակության, ինչպես նաև արտասահմանյան գիտական և արդյունաբերական ներկայացուցիչների լայն շրջանակներում: Գիտաժողովը, որը տևեց 5 օր, թույլ տվեց ծանոթանալ կոմպյուտերային գիտության ոլորտում կատարված վերջին ձեռքբերումներին և նրանց կիրառություններին:

Գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան հարյուրից ավելի հայ և օտարերկրյա մասնագետներ: Մեծ հետաքրքրությամբ լսվեցին գիտական արդյունքների մասին զեկուցումները, որոնք տեղի ունեցան պլենար նիստերում և զուգահեռ 19 սեկցիաներում: Այս զեկուցումները նաև ցույց տվեցին, որ Հայաստանում կոմպյուտերային գիտության բնագավառում առկա է նշանակալի ներուժ:

Գիտաժողովի ընթացքում անցկացվեցին հատուկ նիստեր՝ նվիրված միջազգային գիտական համագործակցությանը: Ներկայացվեց, որ հայ գիտնականները մասնակցել են ինֆորմացիոն տեխնոլոգիաների և կոմպյուտերային գիտության բնագավառի միջազգային մի շարք ծրագրերի: Մեկ այլ հատուկ նիստ նվիրված էր Հայաստանում ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման հարցերին: Նիստին ներկայացված էին շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները: Քննարկումների արդյունքում առաջ քաշվեցին դրույթներ, որոնց իրականացումը կնպաստի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը Հայաստանում:

Գիտաժողովին զուգահեռ արտասահմանյան առաջատար մասնագետների մասնակցությամբ կազմակերպված էին դասախոսություններ հաշվողական տեխնիկայի նախագծման և ատեստավորման ուղղությամբ, որոնք իրականացվել էր IEEE կոմպյուտերային ընկերության և ՀՀ ԳԱԱ մասնակցությամբ:

Գիտաժողովին մասնակցեցին շուրջ 250 գիտնականներ, որոնցից երկու տասնյակից ավելին՝ արտերկրից (Ռուսաստան, Ուկրաինա, ԱՄՆ, Ֆրանսիա, Բելգիա, Իտալիա, Իրան և այլն):

Գիտաժողովը կազմակերպվել էր գիտությունների ազգային ակադեմիայի և ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի նախաձեռնությամբ:

Հայաստանում իրականացված վերջին երկու տարիների դաշտային հնագիտական հետազոտությունները լուրջ արդյունքներ են արձանագրել և դրանցից մեկն էլ Ագարակի նորահայտ հնավայրն է, որի ուսումնասիրությունը սկսվեց 2001 թ. աշնանը, Ամերիկայի Գֆոելլեր հիմնադրամ, ընկերության հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական և կազմակերպչական օժանդակությամբ:

Հուշարձանը գտնվում է Ամբերդ գետի արևմտյան ափին, Արագածոտնի մարզի Ագարակ և Ոսկեհատ գյուղերի հողամասերում: Զբաղեցնում է շուրջ 200 հա տարածք: Նախքան պեղումները, հնավայրի մանրակրկիտ տեղազննության շնորհիվ պարզ դարձավ, որ գործ ունենք մինչ օրս անհայտ մնացած, նոր տիպի հուշարձանի հետ: Տուֆի լավայի նստվածքներից կազմված ռելիեֆի առանձնահատկությունները նկատի ունենալով, այստեղի հնաբնակները վերածել են տեղանքը, դարձնելով այն քարակոփ կերտվածքների մի վիթխարի անսամբլ: Սրանց մեջ հատկապես առանձնանում են ակնհայտ մշակման հետքերով ժայռահարթակները: Ամբերդի հոսանքն ի վար, տասնյակ հեկտարներ զբաղեցնող և անընդմեջ շարունակական քարաժայռերը, քարադեզեր հիշեցնող տուֆի ելքերը, հեղեղատների քարափները, գետնի մակերևույթից սնկաձև վեր խոյացող քարահարթակներն ու առանձին կանգնած քարաժայռերն ամբողջ մակերևույթով, եզրերով, ճակատային մասով մշակված են: Ժայռակոփ կերտվածքների այս անսամբլը լրացնում են ժայռահարթակների շուրջը և միջանկյալ հատվածներում պահպանված շինությունների մնացորդները:

Այսօր էլ, երկրորդ պեղաշրջանից հետո, առաջնային ենք համարում այն վարկածը, որ բացահայտվել է բնույթով խիստ ինքնատիպ, վիթխարածավալ բացօթյա պաշտամունքային մի համալիր, որի ուսումնասիրությունը բացառիկ փաստեր կարող է տրամադրել՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն անցյալի մասին մեր պատկերացումները սրբագրելու, հստակեցնելու առումներով: Միայն այն փաստը, որ առնվազը 4 քառ. կմ տարածք զբաղեցնող լանդշաֆտը վերափոխելով, մարդն այն օտագործել է իռացիոնալ բնույթի կարիքների համար, ինքնին մշակութային ֆենոմեն է, որը բացատրության և արժևորման կարիք ունի:

Առայժմս պեղումներ են կատարվում Ագարակի հյուսիսային համալիրի ժայռահարթակի վրա: 2001-2002 թթ. դաշտային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ Ագարակը բնակեցվել է վաղ բրոնզի դարաշրջանում: Հարթակի հյուսիսարևմտյան եզրին բացված փողոցը, փողոցի երկու կողմերում առկա կլոր հատակագծով կացարաններն ու քառանկյուն կցակառույցները վկայում են, որ վաղ բրոնզում այստեղ եղել է կանոնավոր հատակագծով բնակավայր: Ըստ ամենայնի, Ագարակի վաղ բրոնզեդարյան բնակավայրի հատակագծային հորինվածքի կենտրոնական տարրը մշակված ժայռահարթակներն են, որոնց շուրջ տարածվել են բնակելի թաղամասերը: Պեղումներից հայտնաբերված մեծաքանակ խեցեղենը, թրծակավե արձանիկները, կլոր և պայտաձև օջախները, հենակ պատվանդանների մնացորդները թույլ են տալիս հնավայրի բնակեցման այս շրջանը ժամանակագրել մ.թ.ա. XXIX-XXVI դդ. սահմաններում:

Վաղ բրոնզին հաջորդող շերտը խաթարված է և ներկայացված տարբեր դարաշրջաններում (վաղ բրոնզից մինչև վաղ երկաթ)՝ տարածքի բնակեցման մասին վկայող նյութերով: Ուրարտական կնիքով կարասային թաղման և ուրարտական խեցեղենի առկայությունը թույլ է տալիս ասելու, որ Ագարակի հնավայրը բնակեցվել է նաև մ.թ.ա. VIII-VI դարերում: Վանի թագավորության կազմալուծումից հետո, Ագարակը քաղաքային տիպի խոշոր բնակավայր էր: Պեղված մակերեսներում բացված գինու հնձանների մեծ քանակը վկայում է, որ խաղողագործությունն ու գինեգործությունն Ագարակցիների կյանքում առանձնահատուկ տեղ են զբաղեցրել: Դեպի Շիրակ տանող առևտրական մայրուղու կարևորագույն հանգույցներից մեկը լինելով, այս բնակավայրի տնտեսական և առևտրական կյանքը ծաղկում է ապրել հատկապես մ.թ.ա. IV/III - մ.թ. II/III դարերում: Այդ են վկայում հելլենիստական և ուշ անտիկ շրջանի խեցեղեն պարունակող շերտերից հայտնաբերված Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե դրախման և Օգոստոս Օկտավիանոսի արծաթե դենարը:

Հարթակը և հելլենիստական շերտը ծածկող հողալիցքից հայտնաբերված սակավաթիվ խեցեղենի նմուշները վկայում են, որ հուշարձանը բնակեցվել է նաև զարգացած միջնադարում՝ XII-XIV դդ.: Ագարակի հնավայրի բնակեցման վերջին փուլը ներկայացված է XVII-XVIII դդ. բնորոշ նյութերով:

Պ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Արշավախմբի պետ, հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող

ԻՍԿ ՀԻԴՐՈԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՁԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ 80 ՏԱՐԵԿԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը (ՀԷՁԻ) (նախկին Սևանի ջրակենսաբանական կայան) հիմնադրվել է 1923 թ. և 80 տարի շարունակ զբաղվում է Հայաստանի Հանրապետության ջրային էկոհամակարգերի հետազոտություններով:

Ինստիտուտի գիտական գործունեությունն ի սկզբանե նպատակաուղղված է եղել Հայաստանի գետերի, լճերի, ջրամբարների բնական ռեսուրսների վերականգնման, պահպանման և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրների լուծմանը:

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի մեջ ինստիտուտն ընդգրկվել է 1943 թ.: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է որպես Հայաստանում ջրակենսաբանական գիտության զարգացման ժամանակահատված:

Սևանա լճի մակարդակի իջեցման և էվտրոֆացման ինտենսիվացման պայմաններում հրատապ է դարձել լճաբանության բնագավառում գիտական նոր մեթոդների և մոտեցումների կիրառումը:

Ինստիտուտի տնօրեն, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, որն ինստիտուտի աշխատանքները ղեկավարում է 1973 թվականից առ այսօր, ստեղծվել են հիդրոքիմիայի, հիդրոֆիզիկայի, էկոլոգիական ֆիզիոլոգիայի, փորձարարական էկոլոգիայի և ձկնաբուծության լաբորատորիաներ, զարգացել են գիտական նոր՝ ֆոնկցիոնալ հիդրոէկոլոգիայի, պրոդուկցիոն ջրակենսաբանության ուղղություններ և կիրառվել հետազոտությունների նորագույն մեթոդներ ու մոտեցումներ:

Ինստիտուտի կողմից բացահայտվել են Սևանա լճի էվտրոֆացման մեխանիզմները, որը համաշխարհային լիմնոլոգիական գիտության զարգացման գործում կարևոր ներդրում է:

Սևանա լճի փորձը կիրառվում է նմանատիպ ջրամբարներում՝ էվտրոֆացման պրոցեսները կանխելու ուղղությամբ:

80 տարիների ընթացքում կուտակված կանոնավոր մոնիտորինգային հետազոտությունների արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել լճի ձևաչափական փոփոխությունների և լճային բիոտոպերում օրգանական նյութերի սեդիմենտացիայի օրինաչափությունները, կանխագուշակել էվտրոֆացման պրոցեսների ընթացքը և մշակել բարձրալեռնային լճերի բնականոն զարգացման կառավարման մեթոդներ և պահպանման միջոցառումներ: Օգտագործելով նշված օրինաչափությունները՝ մշակվել են Սևանի լիմնոհամակարգի օլիգոտրոֆացումն ապահովող և տրոֆիկ փոխհարաբերությունները կանխագուշակող ու կառավարող ծրագրեր:

Սևանա լճի էնդեմիկ ձկնատեսակների գենոֆոնդը պահպանելու նպատակով ուսումնասիրվել են նաև սաղմոնազգի ձկնատեսակների և խեցգետնակերպերի էկոլոգիական առանձնահատկությունները և Հայաստանի խոշոր հիդրոէկոհամակարգերում Սև, Քարի, Ակնա լճերում, Ապարանի, Կեչուտի, Մանթաշի ջրամբարներում նրանց կլիմայավարժեցման հնարավորությունները:

Հետազոտվել և գնահատվել են Սևանա լճի արդյունագործական ձկնատեսակների պաշարները:

Ինստիտուտի գիտաներդրական մշակումները ներկայացվել են ՀՀ կառավարություն և հատկապես բնապահպանության ու գյուղատնտեսության նախարարություններ և լայն կիրառում են գտել բնապահպանական ոլորտում:

Սևանա լճի էկոլոգիական վիճակի, ինչպես նաև նրա ջրերի որակի բարելավման նպատակով ինստիտուտի աշխատակիցների նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ մշակվել է «ՀՀ օրենք Սևանա լճի մասին»:

Ինստիտուտն իր գործունեության 80 տարիների ընթացքում գիտական մեծ ծանաչում է ձեռք բերել ինչպես ԱՊՀ երկրների, այնպես էլ արտերկրի խոշոր գիտական կենտրոններում:

Նրա աշխատակիցները համագործակցում են ԱՊՀ երկրների՝ Ռուսաստանի, Բելոռուսի, Ուկրաինայի, Վրաստանի հիդրոէկոլոգիական հետազոտություններով զբաղվող խոշորագույն գիտական կենտրոնների, ԱՄՆ-ի Նյու Յորքի և Տեխասի համալսարանների, Իտալիայի Ջրակենսաբանության ինստիտուտի, Շոտլանդիայի Աբերդինի համալսարանի և Ծովային հետազոտությունների լաբորատորիայի, Իսրայելի և Ճապոնիայի Լճաբանության ինստիտուտների հետ:

Համատեղ աշխատանքներ են կատարվում Հունաստանի Միջերկրածովյան գյուղատնտեսության ինստիտուտի, Հնդկաստանի ԳԱ Օվկիանոսագիտության ինստիտուտի հետ՝ ջրային բույսերի ծանր մետաղներ կուտակելու ընդունակությունների բացահայտման ուղղությամբ:

ՅՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՍԵՄՈՆԱՐՆԵՐ

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 60 ՏԱՐԻՆ

2003 թ. հուլիսի 11-ից 15-ը տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին նվիրված հանդիսությունները:

Հոբելյանական հանդիսությունների շարքը սկսվեց հուլիսի 11-ին՝ ինստիտուտի հրատարակած գրքերի ցուցահանդեսի, գիտավարչական մասի, համակարգչային բաժնի և նիստերի դահլիճի բացման արարողություններով:

Հանդիսավոր նիստը բացեց ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Աշոտ Մելքոնյանը, որն անդրադարձավ Պատմության ինստիտուտի անցած 60-ամյա ուղուն: Նա առանձնապես շեշտեց ինստիտուտի պատմության մեջ նրա առաջին տնօրեն, ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու խաղացած դեր: Ա. Մելքոնյանն ընդհանուր գծերով անդրադարձավ ինստիտուտի 60-ամյա ձեռքբերումներին, նշեց ինստիտուտի կողմից հրատարակված հիմնարար մի քանի աշխատություններ, որոնց թվում առանձնացրեց «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը: Նա կարևորեց նաև ծրագրվող հայոց պատմության քառահատորյակի վրա տարվող աշխատանքները:

Պատմության ինստիտուտի 60-ամյակի առթիվ ողջույնի խոսք ասաց ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը: Նա բարձր գնահատեց հայ պատմագիտության ասպարեզում ինստիտուտի կատարած ներդրումը: Ակադեմիայի պրեզիդենտը ևս կարևորեց «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակը, ապա անդրադարձավ ծրագրվող հայերեն քառահատորյակի դերին ու նշանակությանը և խոստացավ նպաստել դրա ստեղծման աշխատանքներին:

ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս-քարտուղար Վ. Բարխուդարյանը ջերմորեն շնորհավորեց Պատմության ինստիտուտի 60-ամյակը: Վ. Բարխուդարյանի կարծիքով Պատմության ինստիտուտը եղել և մնում է հայագիտության ամենախոշոր կենտրոնը. ինստիտուտը տվել է ոչ միայն նշանավոր գիտնականներ, այլև բուհական ե ւ պետական կյանքի տարբեր ոլորտների ակնառու գործիչներ:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին նվիրված հանդիսությունների շարքը շարունակվեց նաև հուլիսի 12-ին: Ինստիտուտի շուրջ երեսուն աշխատակիցներ այցելեցին միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անի:

Հաջորդ միջոցառումը տեղի ունեցավ հուլիսի 13-ին Շիրակի Սառնաղբյուր գյուղում, ուր անցկացվեց գիտաժողով՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Հանրապետության հիմնադրման 85-ամյակին:

Բացվեց Սառնաղբյուր գյուղի հերոսամարտին նվիրված հուշաքարը:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հիմնադրման 60-ամյակին նվիրված միջոցառումներն եզրափակվեցին հուլիսի 14-15-ին՝ երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների 28-րդ նստաշրջանով: Գիտաժողովին մասնակցում էին ինչպես Պատմության ինստիտուտի, այնպես էլ ԵՊՀ-ի, Հաց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, Հայաստանի ազգային արխիվի և այլ բուհերի ներկայացուցիչներ: Նստաշրջանում լսվեց հայոց պատմության տարբեր հիմնախնդիրներին նվիրված քսանմեկ զեկուցում:

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքահայ գաղթօջախների կյանքում տարեգրքերի հրատարակումը ինքնակազմակերպման և ինքնապահպանման հրատապ, ինչպես նաև պատմագիտական և մշակութաբանական կարևոր դեր ու նշանակություն ունեցող իրողություն է: Օտարության մեջ ազգային ինքնության պահպանման այդ մղումով է, որ գերմանաբնակ մեր հայրենակից, Գերմանիայի Բոխում քաղաքի Ռուրի համալսարանի պատմության ֆակուլտետի Արևելյան Եվրոպայի երկրների նոր և նորագույն պատմության ամբիոնի դոկտորանտ Ազատ Օրդուխանյանը հրատարակել է «Գերմանիայի Հայ ակադեմիականների միության տարեգիրք. Jahrbuch des Armenisch-Akademischen Vereins - 1860 (2001-2002)» (Երևան, 2002, 260 էջ) հատորը:

Տարեգրքում հեղինակը պատմագետ-հետազոտողին հատուկ խնամքով ներկայացրել է Գերմանիայի հայ գաղութի ձևավորման ու զարգացման պատմական ուրվագիծը՝ 7 որոշակի շրջափուլերով. 10-11-րդ դարերից մինչև մեր օրերը:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մերձավոր ու Միջին Արևելքի և Սփյուռքի այլ հայաշատ գաղութների, Գերմանիայի հայերը, այդ թվում նաև ուսանողները, համախմբված տեղաբաշխում չունեն, այլ տարածված են երկրի տարբեր քաղաքներում ու ավաններում: Հետևաբար դժվար է ոչ միայն նրանց համախմբելն ու միություններ կազմակերպելը, այլ նաև Գերմանիայում ապրող հայերի և մասնավորապես հայ ուսանողության թվի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրություն ունենալը: Նախնական տվյալներով ներկայումս Գերմանիայի 200-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են տարբեր երկրներից ժամանած ավելի քան 750-800 հայ ուսանող և դոկտորանտ (ասպիրանտ), իսկ նրանց առավելագույն համախմբումը այս կամ այն համալսարանում կազմում է 20-25 անձ (էջ 22):

Հեղինակը ժամանակագրական վերլուծությամբ ներկայացնում է Գերմանիայում հայ ուսանողության անցած ուղու պատմական ուրվագիծը՝ սկսած 19-րդ դարի կեսից մինչև ներկա ժամանակները, և նշում, որ դեռևս 1860-ական թվականներին Գերմանիայում ուսանող հայ երիտասարդների կողմից միավորվելու առաջին փորձերն են կատարվել:

Միաժամանակ, եթե 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Գերմանիա ուսանելու էին մեկնում հիմնականում ռուսական կայսրությունում բնակվող արևելահայերը, ապա 1920-1950 թթ. դադարին հաջորդած ժամանակաշրջանում՝ ընդհուպ մինչև մեր օրերը, ակտիվացել է սփյուռքահայ տարբեր գաղթօջախներից դեպի միացյալ Գերմանիա ուսանելու մեկնող հայ երիտասարդության հոսքը:

Վերջին 20-25 տարիների ընթացքում հայկական Սփյուռք ունեցող որոշ երկրներից և Հայաստանից դեպի Գերմանիա շարունակվող արտագաղթի արդյունքում իր վերջնական ձևավորման հանգրվանին հասած գերմանահայ գաղութում նկատելի է դարձել գերմանահայ մասնագիտական կառույցների կազմավորումը: Այդպիսիներից է 2001 թ. հունվարի 7-ին Բոխումում վերաբացված Գերմանիայի «Հայ ակադեմիականների միություն-1860» գիտաուսումնամշակութային կազմակերպությունը (նախագահ՝ Ա. Օրդուխանյան), որն այժմ գերմանահայ կազմակերպությունների մեջ ամենաբազմանդամներից ու ամենագործունյաներից մեկն է (էջ 41, 42): ՀԱՄ-ը, որպես 1860 թ. Գերմանիայում գործած և երբմնի աշխույժ ուսանողական-ակադեմիական կյանք ունեցող (Գերմանիայում են ուսանել Գրիգոր և Անդրեասաս Արծրունի եղբայրները, Կոմիտասը, Ավետիք Իսահակյանը, Մանուկ Աբեղյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը և այլոք) համանուն միության իրավահաջորդ ու ավելի քան 140-ամյա հարուստ ավանդույթների շարունակող, նպատակ ունի «... վերակենդանացնել գերմանահայ ուսանողության պատմական հարուստ ավանդույթները և փորձել հնարավորին չափ կազմակերպել հայ ուսանողության և երիտասարդ մտավորականների ստեղծագործական և հասարակական կյանքը Գերմանիայում» (էջ 221, 223):

ՀԱՄ ջանքերով Բոխումում գործում է հայկական մեկօրյա դպրոց (ուսուցիչ՝ Ա. Օրդուխանյան), ուր դասավանդում են հայերեն (գրել, կարդալ), հայոց պատմություն, հայ գրականություն, Հայաստանի աշխարահագրություն (էջ 51, 52):

Նորաստեղծ ՀԱՄ-ը հաջողությամբ իրականացնում է ուսումնամշակութային միջոցառումների մի ամբողջ շարք, միությունն արձագանքում է համազգային գրեթե բոլոր ձեռնարկներին, կազմակերպում Սփյուռքի, Հայրենիքի և օտար մտավորականների ու մշակույթի գործիչների հետ հանդիպումներ, ձեռնարկում ուղևորություններ դեպի Եվրոպայի հայկական համայնքներ, ինչպես նաև հոգում գերմանահայ երեխաների ու պատանիների ամառային ուսումնամշակութային հանգիստը տեղի ամառային ճամբարներում, անցկացնում ամանորյա ծոխ հանդիսություններ և այլն (էջ 56-61):

Գերմանիայի հայ ակադեմիականների միության ամենամյա գործունեությունը լուսաբանող տարեգրքից բացի ՀԱՄ-ը սկսել է հրատարակել նաև միության շնորհալի անդամների ստեղծագործությունները ներկայացնող պարբերական մատենաշար (թիվ 1, Արմինե Ղուլոյան, Դաշնամուրային ստեղծագործություններ, Երևան, 2002):

Ա. Օրդուխանյանի հեղինակությամբ լույս տեսած «Գերմանիայի հայ ակադեմիականների միության տարեգիրքը» արժեքավոր ներդրում է հետզհետե հայաշատ դարձող եվրոպական այդ գաղութի, որպես արդի Սփյուռքի մի հատվածի ներհամայնքային կյանքն առարկայորեն լուսաբանելու և պատմական ընդհանուր ուրվագիծը ներկայացնելու, օտար ափերում ազգային ինքնության բացահայտման ու պահպանման ուղղությամբ: Այն ունի նաև պատմագիտական և սկզբնաղբյուրային բացառիկ արժեք ու նշանակություն գերմանահայոց արդի պատմությանն առնչվող փաստավավերագրական նյութեր տրամադրելու առումով:

Քնարիկ ԱՎԱԳՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող

Համաշխարհային տիրապետություն... նաև լեզվի միջոցով

(Սկիզբը՝ N 3-ում)

Ֆրանսիացիները միակը չեն անգլերենի ավերիչ արշավանքի դեմ մղվող պայքարում: Անցյալ տարի Լեհաստանում ընդունվեց օրենք, որը արտասահմանյան ապրանք վաճառող կամ գովազդող ընկերություններին պարտավորեցնում էր պիտակների և գովազդների տեքստերում օգտագործել միայն լեհերենը: Անգամ Գերմանիան, որ բացառիկ է Եվրոպայում որպես տերություն, անհրաժեշտ է համարում պայքարել անգլերենի ներխուժման դեմ: Գերմաներենի ուսումնասիրության ինստիտուտը 3 տարի առաջ զայրալից նամակ հղեց հեռուստահաղորդակցման միջոցներին՝ անգլերեն արտահայտություններից գերմաներենը անաղարտ պահելու վերաբերյալ: Իսկ պրոֆեսոր Վոլֆգանգ Կրամերը այնքան էր զայրացել լեզվի աղտոտման համար, որ ստեղծեց գերմաներենի պաշտպանության ընկերություն: Այս ընկերությունը ամեն տարի հատուկ մրցանակներ է շնորհում գերմաներենի մաքրության համար:

Իսպանիան իր Ակադեմիայի միջոցով, ֆրանսիականի օրինակով, նույնպես փորձում է դիմագրավել անգլերենի գրոհին: Իսպանական 46 Ակադեմիաների խնդիրն է, որպեսզի մաքրեն, կարգի բերեն և վեհություն հաղորդեն իսպաներենին, որը չափազանց ճկուն է ու կենսունակ: Եվ սա չնայած այն հանգամանքին, որ իսպաներեն խոսողների 10-ից 9-ը ապրում են Իսպանիայից դուրս: Ի դեպ, իսպանախոս երկրները Լատինական Ամերիկայում, Ֆիլիպիններում և Հյուսիսային Ամերիկայում, ստեղծել են սեփական ակադեմիաներ, որոնք կոչված են պաշտպանելու և անաղարտ պահելու իրենց լեզուն:

Թե որքանով արդյունավետ կլինեն աշխարհի ժողովուրդների ջանքերը՝ անգլերենի անզուսպ ներխուժման առաջն առնելու խնդրում, ցույց կտա ժամանակը: Պարզ է միայն մեկ բան. լոկ պատժամիջոցներով և որոշումներով անհնար է կանխել անգլերենի անզուսպ հաղթարշավը: Սակայն սա չի նշանակում, թե անհետացման սպառնալիքի տակ հայտնված լեզուն անհնար է պահպանել:

Մոհավկյան լեզուն, օրինակ, որով խոսում են մոհավկ ցեղի հնդկացիները՝ Քվեբեկի բնիկները, մինչև 1970 թվականը անկում էր ապրում: Եվ երբ սկսեցին դպրոցներում երեխաներին սովորեցնել այդ լեզուն, մոհավկերենը սկսեց վերակենդանանալ: Վալիերենը և մաորի լեզուները հեռուստատեսության և կառավարության ակտիվ ջանքերով նորից հարություն առան: Իռլանդիային հաջողվեց պահպանել սագաների (ասք) լեզուն, թեև այդ լեզվով խոսում է ընդամենը 275 հազար մարդ: Ավելին, այդ լեզուն զարգացավ ավելի շատ նոր բառերի ստեղծման շնորհիվ է, և ոչ թե օտար լեզուներից փոխառությունների միջոցով:

Ըստ երևույթին, ազգային լեզվի պահպանության և զարգացման կարևորագույն խթան է լեզվին քաղաքական իմաստավորում և նպատակ հաղորդելը: Իռլանդերենի կապը իռլանդական ազգայնականության հետ 19-րդ դարում այդ լեզուն փրկեց անհետացումից: Նույն ձևով էլ հրեական պետության ստեղծումով իվրիտը դարձավ պետական լեզու, որը մինչ այդ լոկ գրավոր լեզու էր:

Եվ, այնուամենայնիվ, շատ ժողովուրդների համար անգլերենի հաղթարշավը եղավ պարտություն, եթե չասենք՝ ավերիչ ու կործանարար սեփական լեզվի համար:

Յուրաքանչյուր շաբաթ աշխարհում գործող վեց կամ յոթ հազար լեզուներից մի քանիսը դուրս են մղվում գործածությունից:

Ոմանք այդ կարծիքին են, որ նոր հարյուրամյակի վերջերին աշխարհի լեզուների կեսը կանհետանա երկրի երեսից, ուրիշներն էլ պնդում են, թե այդ թիվը կհասնի 90 տոկոսի: Այստեղ չմոռանանք անպայման նշել, որ երբ մեռնում է լեզուն, նրա հետ միասին կորստյան է մատնվում համաշխարհային մշակույթի և պատմության ինքնատիպ և անկրկնելի փոքրիկ մի կտոր:

Այս անողոք ճշմարտությունը աստիճանաբար հասու է դառնում բոլորին: Եվրամիությունը, օրինակ, 2001 թվականը հռչակեց եվրոպական լեզուների տարի: Զարմանալի է, որ լեզվական մրցակցություններին թշնամաբար վերաբերող Ֆրանսիան փոխեց իր դիրքորոշումը և հանդես եկավ սահմանադրական համարձակ հայտարարությամբ, թե «Ֆրանսիական Հանրապետության լեզուն ֆրանսերենն է»:

Մի նկատառում ևս: Չնայած այն հանգամանքին, որ որոշ լեզուներ անհետանում են երկրի երեսից, ավելի ու ավելի շատ մարդիկ են սկսում խոսել մի քանի լեզուներով: Բազմալեզվայնությունը, որը բնորոշ էր ցածր զարգացում ունեցող Աֆրիկայի մարդկանց համար, այժմ օրինաչափ է դանիացիների, սկանդինավցիների և շատ-շատ ուրիշների համար: Մինչդեռ անգլերենի հիմնական կրողները՝ անգլիացիները, ավելի ու ավելի քիչ են ուզում սովորել երկրորդ կամ երրորդ լեզուն: Անցյալ տարի Միացյալ Նահանգների համալսարանների արաբերեն լեզվի ֆակուլտետները ավարտել է ընդամենը 10 ուսանող: Իսկ Եվրամիության երկրներում միայն մեկ լեզու տիրապետողների մեջ ամենաշատը անգլիացիներն են:

Ստացվում է, որ մոլորակի անգլիախոս բնակիչները որևէ այլ լեզու սովորելու պահանջ կամ անհրաժեշտություն չունեն: Եվ թեև անգլիախոս ժողովուրդները դրանով իրենց մեկուսացնում են այլ ժողովուրդների գրականությունից, մշակութից, պատմությունից, ազգային մտածողությունից, սակայն դա, ըստ երևույթին, բացարձակապես չի անհանգստացնում կամ մտահոգում նրանց:

Վերը շարադրվածից պարզ երևում է, որ զգալով անգլերենի ներխուժման կործանարար և ավերիչ հետևանքները իրենց լեզվի, մշակույթի, ազգային նկարագրի համար, աշխարհի շատ պետություններ և ժողովուրդներ, ռաջող կամ անհաջող օրգեր են գործադրում անգլերենի գլոբալացման պայմաններում իրենց լեզուն և մշակույթը պահպանելու համար:

Հայաստանին նույնպես պետք է անհանգստացնի անգլերենի համընդհանրացման և ներխուժման վտանգը: Մենք ինքնակամ և անգամ հափշտակված նետվել ենք այդ ամենակուլ հորձանքի գիրկը, մոռանալով, որ այն սպառնում է մեր լեզվի անաղարտությանն ու գոյությանը, և որ լեզվի հետ երկիր է ներխուժում, ներդրվում ու պարտադրվում մեր ինքնությանը օտար մասսայական մշակույթը, կենցաղը, ապրելակերպը, բարքերը:

Հասկանալի է, որ ժամանակակից աշխարհում անգլերենը մեծ դեր է խաղում համաշխարհային գիտատեխնիկական նվաճումներին ծանոթանալու համար, սակայն դա չպետք է լինի մայրենիի հաշվին: Ավելին, առանց մայրենի լեզվի լավ իմացության, հնարավոր չէ որևէ օտար լեզու ուսումնասիրել: Իսկ մայրենի լեզվի արմատներին ամուր կանգնած ազգը չի կորցնի իր մշակութային արժեքները և ազգային նկարագիրը:

Չենք ուզում ծավալվել, որովհետև ասելիքը չափազանց ընդգրկուն է: Ասենք միայն, որ մեր ժողովուրդը հազարամյակների իր պատմության դաժան փորձությունների ճանապարհն անցել, գոյատևել ու ապրել է դիմակայելու իր անսահման կարողությամբ, նա պահպանել է իր ինքնատիպ մշակույթը, նկարագիրը, իր հոգևոր կերտվածքը, ավանդույթները, սովորույթները՝ իր մայրենին պահպանելու շնորհիվ միայն: Եվ եթե շատ պետություններ, ազգեր, ժողովուրդներ ու լեզուներ անհետացել, կորստյան են մատնվել- մենք երրորդ հազարամյակ ենք հասել դիմադրելու, պաշտպանվելու, կրոնական և ազգային ձուլմանը դիմագրավելու աստվածատուր շնորհով:

Մինչդեռ հիմա մենք չենք դիմադրում, այլ դյուրահավատ հոմանուհու նման նետվել ենք գլոբալացման գիրկը: Իսկ համընդհանրացնող ամերիկերենի գրկախառնությունը անչափ վտանգավոր է անգամ շատ ավելի մեծ ու հզոր երկրների համար, էլ ուր մնաց փոքրիկ Հայաստանը և հայերենը:

Նյութը անգլերենից թարգմանել և հրապարակման է պատրաստել ԳԵՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Արդիականացման ճանապարհին

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ) հիմնադրվել է 1935 թ. ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղին (Արմֆան) կից: 1943 թ. Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հիմնադրման օրվանից ՀՀԳԱԱ ՀԳԳ-ը գործում է որպես ՀՀԳԱԱ նախագահության ենթակայության տակ գտնվող առանձին ակադեմիական հաստատություն:

ՀԳԳ-ն իր ֆոնդերի ծավալով (շուրջ 3 մլն բնական, տեխնիկական և հումանիտար գիտությունների վերաբերյալ հրատարակություններ) հանրապետության խոշորագույն գիտական գրադարանն է, գիտական տեղեկատվության կենտրոն, որն իրականացնում է ինչպես ՀՀԳԱԱ, այնպես էլ ողջ հանրապետության գիտահետազոտական հիմնարկների և մասնագետների գրադարանա-մատենագիտական և գիտատեղեկատվական սպասարկումը՝ շուրջ 15 հազար ընթերցողների:

ՀԳԳ-ն իրականացնում է նաև ԳԱԱ համակարգի ինստիտուտների 30 ճյուղային-մասնագիտական գրադարանների մեթոդական ղեկավարությունը և նրանց գործունեության համակարգումը, որոնք միասին իրենց ֆոնդերում ունեն շուրջ 1,2 մլն գրադարանային միավոր և սպասարկում են ավելի քան 6 հազար ընթերցողներ:

Ի թիվս այլ կարևոր խնդիրների ՀՀԳԱԱ ՀԳԳ-ը հատուկ ուշադրություն է դարձնում իր ֆոնդերը հայատառ հրատարակություններով և բոլոր լեզուներով հայագիտական գրականությամբ համալրելու գործին: Ուշադրության է արժանի նաև գրադարանի հազվագյուտ և հնատիպ գրքերի ֆոնդը, որը բաղկացած է 16-18 դդ. հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով բազմաթիվ մեծարժեք հրատարակություններից:

Գրքային այս ողջ հարստությունը լայնորեն ի սպաս է դրված գրադարանի ընթերցողներին՝ աբոնեմենտի ծառայության և 4 մասնագիտացված ընթերցասրահների միջոցով:

Վերջին տարիներին գրադարանը լուրջ քայլեր է ձեռնարկել իր գրադարանամատենագիտական գործունեության մեջ նոր, ժամանակակից համակարգերի ներդրման և կիրառման ուղղությամբ, ինչն իրականացվում է հիմնականում արտասահմանյան հիմնադրամների աջակցությամբ:

Բաց Հասարակության Ինստիտուտի (ԲՀԻ) դրամաշնորհով Հիմնարար գիտական գրադարանը ՀՀԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի հետ համատեղ իրագործել է գրադարանային աշխատանքների ավտոմատացման նախագիծ, որի շնորհիվ գրադարանում ստեղծվել է համակարգչային մասնակի ցանց և ՀՀԳԱԱ հրատարակությունների տվյալների էլեկտրոնային շտեմարան:

Ներկայումս ՀԳԳ-ը հանրապետության 5 խոշորագույն գրադարանների հետ մասնակցում է ԲՀԻ-ի հովանավորությամբ իրականացվող «Հայկական միացյալ գրադարանային ավտոմատացված ցանցի» համալիր ծրագրի իրականացմանը, որի շնորհիվ ընթացքի մեջ է գրադարանի գրքային ֆոնդի էլեկտրոնային քարտարանի ստեղծումը տվյալ ցանցի շրջանակում:

Միաժամանակ ԲՀԻ-ի աջակցությամբ EBSCO հրատարակչությունը ԳԱԱ գրադարաններին տրամադրել է ավելի քան 300CD և DVD սկավառակներ, որոնք արդի տեղեկատվություն են պարունակում տնտեսագիտական (բիզնես, մարկետինգ, մենեջմենտ), բժշկագիտական, զանազան բնույթի արտասահմանյան ակադեմիական հրատարակությունների մասին:

ՀԳԳ-ն իրականացնում է նաև eIFL Direct միջազգային նախագիծը, որը կոչված է ապահովելու էլեկտրոնային ինֆորմացիայի հայթայթումը և օգտվողների սպասարկումը:

INTAS-ի դրամաշնորհով ՀԳԳ-ում կազմակերպվել է արտասահմանյան գիտական նորագույն հոդվածների որոնման, պատվիրման և ստացման ծառայությունը, որի շնորհիվ 2001-2003 թթ. ակադեմիական ինստիտուտներին տրամադրվել է ավելի քան 1500 արդի գիտական հոդված:

Բոլորովին վերջերս ՀԳԳ-ի նախաձեռնությամբ հիմնադրվել է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումը, որի գործունեության հիմնական նպատակն է լինելու նպաստել բազմատեսակ արդի գիտական էլեկտրոնային-տեղեկատվական աղբյուրներից օգտվելու հնարավորության ապահովմանը, Հայաստանում էլեկտրոնային նորարական մեթոդների կիրառմանը, առաջավոր համակարգչային տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը:

ՀԳԳ-ում ընթերցողներին արդեն ի սպաս է դրված 2 համակարգչային շտեմարան, որոնք սպասարկվում են վերաբացված հատուկ ընթերցասրահում և ստեղծվել է նոր բաժին ավտոմատացման և էլեկտրոնային սպասարկման, որի առաջնահերթ խնդիրներից մեկն էլ գրադարանի հիմնական ֆոնդի գրականության համակարգչային շտեմարանի ստեղծումն է, ինչն էլ հնարավորություն կընձեռի գիտական գրականության հարուստ և բազմազան ֆոնդերն արդի պատշաճ մակարդակով ի սպաս դնել գիտական հասարակայնությանը:

Կարապետ ՄԻՆԱՍՅԱՆ
ՀՀԳԱԱ ՖԳԳ փոխտնօրեն

ԴԱՍԻՍ ԵՄ ԱԿՈՒՆՔՆԵՐԻՑ

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժինը 1937-ին ավարտելուց հետո, որոշեցի գինվորագրվել Թորոս Թորամանյանի մահվանից հետո բափուր մնացած բնագավառին՝ հայկական ճարտարապետության հետազոտմանը: Դրա համար կարիք կար գիտելիքներս ըստ հնարավորին լրացնել, որի համար ընդունվեցի ասպիրանտուրա:

1930-ական թթ. Հայաստանում գործող գիտական հաստատությունները միավորելով ստեղծվեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղ (Արմֆան), որի կազմում էր գործում պատմության և նյութական մշակույթի ինստիտուտը: Մասնաճյուղի տնօրեն ԽՍՀՄ ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, պատմության ինստիտուտի տնօրեն Մկրտիչ Ներսիսյանը լայն հոգատարությամբ շրջապատեցին մեզ՝ ասպիրանտներիս, էապես նպաստեցին երիտասարդ գիտնականների դաստիարակման ազգօգուտ գործին:

Հնագիտության բաժնի (ղեկ. պրոֆ. Սմբատ Տեր-Ավետիսյան), ասպիրանտներ Բաբկեն Առաքելյանը, Հարություն Մնացականյանը և ես, մասնակցում էինք հայ ժողովրդի պատմության (դասախոս՝ Համո Հարությունյան), փիլիսոփայության (դասախոս՝ Հայկազ Ալանյան), հնագիտության հիմունքներ (դասախոս՝ Սմբատ Տեր-Ավետիսյան), գրաբարի և գերմաներենի (դասախոսներ՝ Ասլան Շահնազարյան, Սառա Սաղումյան) պարապմունքներին: Մեծապես օգտակար եղան իմ գիտական ղեկավար պրոֆ. Նիկողայոս Բունիաթյանի և նրան փոխարինող ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Կամիլլա Տրեվերի խորհրդատվությունները: Սակայն գործնական մկրտությունը ստացանք Դվինի պեղումներին՝ 1939-1940 թթ. արշավախմբերին մասնակցելով: Անձամբ ինձ համար չափազանց օգտակար եղավ, որպես խմբագրական հանձնախմբի անդամ, մասնակցելը Թորոս Թորամանյանի «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» առաջին հատորը հրատարակման նախապատրաստելը: Այն լույս տեսավ 1942 թ., երբ ես զորակոչված էի բանակ, ինչպես ասպիրանտներից շատերը: Ցավոք մի քանիսը չվերադարձան ռազմի դաշտերից...

«Դվինի 5-7-րդ դարերի ճարտարապետական հուշարձանները» խորագրով ատենախոսությունը պաշտպանեցի 1946-ին՝ Լենինգրադում, առաջինը Հայաստանում հայցելով ճարտարապետական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Ներկա էր ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, որը հանդես եկավ բոցավառ ճառով, ողջունեց երիտասարդիս մուտքը՝ գիտության բնագավառ:

Անձամբ ծանոթ եմ եղել 1943 թ. հիմնադրված Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին ակադեմիկոսներից՝ Հակոբ Մանանդյանին, Կարապետ Մելիք-Օհանջանյանին, Ստեփան Մալխասյանին, Ավետիք Իսահակյանին, խորհրդատվություններ եմ ստացել գիտության կաճառի այդ հիմնադիրներից: Թեև 94 տարեկան եմ ու կյանքումս շատ բան եմ տեսել, բայց երջանիկ եմ, որ այսօր մասնակից ու ականատես եմ Ակադեմիայի 60-ամյա հոբելյանին:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ակադեմիկոս

Ակադեմիկոս Աշոտ ՌՈՒԽԿՅԱՆ-100

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐ



Հայկական գյուղատնտեսական ակադեմիայի նիստերի մեծ դահլիճում հանդիսություն էր: Այստեղ էին հավաքվել գյուղատնտեսության ոլորտի բազում գիտնականներ, կառավարության ներկայացուցիչներ, Ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը, հյուրեր այլ հանրապետություններից, ուսանողներ, զանգվածային լրատվության ներկայացուցիչներ:

Բացելով հանդիսությունը, գյուղատնտեսական ակադեմիայի ռեկտոր, պրոֆեսոր Ա. Թարվերդյանն ասաց.

- Այսօրվա հանդիսավոր նիստը նվիրված է դեռևս խորհրդային տարիներին արժանի համբավ վաստակած գյուղատնտեսության (հատկապես՝ անասնաբուծության) բնագավառի ականավոր գիտնական, հիանալի մանկավարժ, ակադեմիկոս Աշոտ Արամի Ռուխկյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Մենք քիչ առաջ ներկա եղանք մեծ երախտավորի տան պատին ամրացված հուշատախտակի բացման արարողությանը. այն հարգանքի տուրք է, խորին ակնածանք մեծ ուսուցչի, շնորհալի հայորդու հիշատակին:

Ակադեմիկոս Ա. Ա. Ռուխկյանի կյանքի և գիտական գործունեության մասին հանգամանալի խոսք ասաց ՀՀ գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի նախագահ, պրոֆեսոր Ս. Ղազարյանը: Այն խոսուն վավերագրություն էր պկանավոր գործչի գիտամանկավարժական, հասարակական գործունեության վերաբերյալ, որի հանդեպ սերունդների պատկառանքը չի խամրում, և նրա անհատականության օրինակը նոր թափով է հնչում, նոր լույս է սփռում ապրողաց համար...

Պրոֆեսոր Ռ. Վառյանի ելույթից. «Թբիլիսիի պոլիտեխնիկական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի շրջանավարտ (ագրոնոմ) Ա. Ա. Ռուխկյանը դեռևս իր գիտական գործունեության շեմին (1926 թ.) որդեգրեց Հայաստանի անասնաբուծությունը գիտականացման ուղիով վարելու, կազմակերպելու սկզբունքը, որպիսի դրվածքը կանխակալ էր նաև նրա ավագ գործընկերների՝ անասնաբույծներ Ալ. Քալանթարի և Ալ. Թամամշևի գործելակերպում: Ա. Ռուխկյանը խորապես համոզված էր, որ տեղական ցածր մթերատու (աբորիգեն) տնայնացված կենդանիներն անպայմանորեն պետք է բարելավվեն կուլտուրական ցեղերով այնպես և այնքան, որ դառնան բարձր մթերատու: Այսինքն, նա ձգտում էր այնպիսի արդյունքների, որոնք կհանդիսանան կենդանիների գենետիկական բարելավման հիմքը: Իսկ կենդանիների բարելավման գիտական հիմքը սելեկցիան էր: Նա անվարան մտավ այդ բարդ, դժվարին գործունեության մեջ. էքսպեդիցիոն համառ հետազոտություններով բնութագրեց (տարբերակեց) գյուղատնտեսական կենդանիների առկա գենոֆոնդը՝ ըստ հայկական կլիմայական-զոնալ տարածքների, ապա ձեռնամուխ եղավ գիտական-կազմակերպական վերափոխումների ծրագրերի կազմմանն ու իրագործմանը:

Հարկ եղավ հանրապետության տարածքով մեկ հիմնադրել անասնաբուծական հենակետեր, զոնալ կայաններ՝ ըստ տարբեր տեսակի կենդանիների գլխաքանակի: Հետագայում՝ 1935-ին, անասնաբուծական այդ համալիր կառույցներում Ա. Ռուխկյանի ջանքերով մտցվեց գիտական մաս (բաժին). 1943 թ. հիմնադրվեց անասնաբուծական ընդլայնված կայանը՝ իր հստակ գիտական բաժնով. 1944-ին այդ ամբողջ հիմքի վրա կազմավորվեց հայկական անասնաբուծության գ/հ ինստիտուտը՝ Ա. Ա. Ռուխկյանի տնօրինությամբ:

Շուրջ տասը տարի նրա ակտիվ դրսևորումներն ուղղվեցին հանրապետության անասնաբուծության վերափոխական գործընթացին. ինստիտուտն ընդարձակվեց մի շարք կարևոր գ/հ բաժինների և լաբորատորիաների հիմնադրմամբ (գ. տ. կենդանիների կերակրման, կերերի կենսաքիմիայի, բուսաբուծության, տավարաբուծության, կենդանիների գենետիկայի, սելեկցիայի և այլն):

Անժխտելիորեն իրականանում և կյանքի էին կոչվում պրոֆեսոր Ա. Ա. Ռուխկյանի գիտական ծրագրերը. հանրապետությունում արմատապես բարելավվում էին հանրային անասնագլխաքանակի տեսքը, մթերատվությունը: Ակնառու էր անասնաբուծության ոլորտում վարման նորագույն տեխնոլոգիաների կիրառական նվաճումները, ի շնորհիվ որոնց այն մրցանակային որոշակի համարում ձեռք բերեց խորհրդային ինստիտուտների ցանկում:

Գիտնականի հիմնադրած ինստիտուտային կարգուկանոնը, ծրագրերի կատարողական պատասխանատվությունը մնացին-պահպանվեցին նաև նրա ղեկավարումից հետո. ինստիտուտի ենթակայության ներքո գործում էին շուրջ 60 անասնաբուծական տոհմային տնտեսություններ՝ տիպիկ տոհմային կենդանիների առկայությամբ: Հայկական անասնաբուծության փաստացի հաջողությունն էր, որ գ/հ ինստիտուտի և արտադրության աշխատողների երկարամյա տքնաջան գիտական-սելեկցիոն հետևողական աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին կատարելագործված բարձր մթերատու ցեղերը՝ տավարի կովկասյան գորշը (1960 թ.), հավերի երևանյան (1974 թ.), ոչխարների կիսակոպտաբուրդ (1984 թ.), ճագարների հայկական մարդեր (1940 թ.), խոզերի հայկական մսատու (1994 թ.), որպիսի հաջողությունը նաև Ա. Ա. Ռուխկյանի գիտական ավանդի իրականացման վառ ապացույցն է:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում)

Մեդորա ԽԱՉԱՏՐՅԱՆ
Գյուղ. գիտությունների դոկտոր, լրագրող

ՀՈԴՎԱԾԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ՀՈՎԱՆԱՎՈՐԵԼ Է ԱՌԻՆՋԻ ԾԱՌՈՒԿՅԱՆ ՍՊԸ ՏՆՕՐԵՆ ՌՈԶԱ ԾԱՌՈՒԿՅԱՆԸ

ԳՈՒՐԳԵՆ ԷԴԻԼՅԱՆՆ ՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Աղստևի հովիտը իր գեղատեսիլ բնությամբ, հայկական բազմաթիվ բնակավայրերով և աշխատասեր ստեղծագործ մարդկանցով, հպարտանալու իրավունք ունի իր երախտավորների ազգանվեր գործերով, ավանդույթներով, բարեգործությամբ, իր պատմության հերոսական դրսևորումներով: Այս հովտի բնակավայրերից է վաղեմի Քարվանսարան՝ այսօրվա Իջևան քաղաքը: Նրա հիմնադրման օրից անցել է ավելի քան երկու դար: Ստեղծման նպատակը՝ Թիֆլիսից Հայաստան և ապա Պարսկաստան տանող գլխավոր ճանապարհը այլազգիների ավազակային հարձակումներից պաշտպանելու, ճանապարհորդների անվտանգությունը ապահովելու համար:

Մեզ հասած գրավոր աղբյուրներում բնակավայրի նշանավոր մարդկանց թվում հիշատակվում է նաև Առաքել էդիլյանի անունը: Հիմնավորվելով այստեղ, էդիլյանները տուն են կառուցել, օջախ ստեղծել, երեխաներ մեծացրել:

Առաքել էդիլյանը 1861 թվականին ծնված իր որդի՝ Արշակին, գյուղի ծխական դպրոցն ավարտելուց հետո, ուղարկում է Թիֆլիս Ներսիսյան դպրոցում ուսանելու: Արշակը 1883 թվականին հաջողությամբ ավարտում է դպրոցը և վերադառնում է հարազատ գյուղ և սկսում աշխատել գյուղի երկսեռ երկդասյան դպրոցում որպես ուսուցիչ: Սակայն հայրը ցանկանում է, որ իր որդին քահանա դառնա: Եվ ահա Արշակը 1885 թվականի օգոստոսի 22-ին Թիֆլիսի Մայր եկեղեցում, Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի օրհնությամբ ձեռնադրվում է Մեսրոպ հոգևոր անունով ոչ կուսակրոն քահանա: Այդ օրից սկսվում է Մեսրոպի քահանայական և մանկավարժական, հասարակական գործունեությունը Քարվանսարայում, Դիլիջանում, Վերին Աղդանում, Գոշավանքում, Առի, Ռևազլու և այլ հարակից գյուղերում:

1885 դեկտեմբերի 25-ին ծնվում է Մեսրոպի (Արշակ) որդի Գուրգենը: Ծխական դպրոցն ավարտելուց հետո հայրը Գուրգենին ուղարկում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոց: Սակայն երկու տարի անց, միջոցների բացակայության պատճառով, Գուրգենը դուրս է գալիս դպրոցից: Չկամենալով, որ որդին թերուս մնա, Մեսրոպը դիմում է Կաթողիկոս Խրիմյան Հայրիկին՝ որդի Գուրգենին Գևորգյան ճեմարանում սովորելու թույլատվության խնդրանքով. «Վստահ եմ, թե ժամանակին ազգին պիտանի զավակ կդառնա»: Խրիմյան Հայրիկը ընդառաջում է, և Գուրգենը 1898 թվին դառնում է ճեմարանի սան: Գուրգենը հաջողությամբ ավարտում է ուսումը և, էջմիածնի միջնորդությամբ, մեկնում Գերմանիա՝ շարունակելու կրթությունը: Նախ սովորում է Ենայի և Լայպցիգի համալսարաններում, տիրապետում գերմաներենին, այնուհետև անցնում է Շվեյցարիա և ուսումը շարունակում Բեռնի համալսարանում: 1919 թ. Գուրգենը փայլուն կերպով պաշտպանում է «Քննադատություն Ցիլլերի ձևական աստիճանների» թեմայով դիսերտացիա և ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան: Աշխատասիրությունը լույս է տեսնում գերմաներեն և հայերեն լեզուներով:

Վերադառնալով հայրենիք, 24-ամյա Գուրգենը նույն տարվա աշնանից աշխատում է ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ՝ հոգեբանության, մանկավարժության, մեթոդիկայի ուսուցիչ և վարժոցի ղեկավար: Հինգ տարի հետո՝ 1914-1919 թթ. ուսուցչություն է անում ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ: «Գուրգեն էդիլյանը Ներսիսյան դպրոցի այն ուսուցիչներից էր, որոնք առաջին իսկ դասից դառնում էին աշակերտների սիրելին (Հովսեփ Գալստյան «Հայ մշակույթի օրրանը»):

1920 թվականին կազմակերպվում է Երևանի պետական համալսարանը, որի հիմնադիրներից մեկն էլ դառնում է Գուրգեն էդիլյանը: Այստեղ մեկ տարի նա վարում է մանկավարժություն և հոգեբանություն առարկաները, միևնույն ժամանակ կատարում ամբիոնի վարիչի պարտականությունները, իսկ 1922-1924 թթ. վարում է Լենինականի դպրոցների և Ամերիկկոմի որբանոցների տեսուչի պարտականությունները: 1934 թ.-ին նա պետական համալսարանում և նորաստեղծ մանկավարժական ինստիտուտում դասավանդում է հոգեբանություն, մանկավարժություն: Պրոֆեսոր էդիլյանը միաժամանակ Մոսկվայի հոգեբանության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող էր: Հմուտ մանկավարժն ու գիտնականը մանկավարժական գործունեությանը զուգահեռ գրում է մեծաքանակ աշխատություններ՝ մանկավարժության, հոգեբանության, լեզվի և գրականության մեթոդիկայի վերաբերյալ, դառնում 70-ից ավելի գիտական աշխատությունների և հոդվածների հեղինակ: «Գուրգեն էդիլյանը առաջին խորհրդահայ մանկավարժ-հոգեբանն է, որ Հայաստանում հիմք է դրել փորձարարական ուսումնասիրություններին, կազմակերպել հոգեբանության լաբորատորիա և զբաղվել հոգեբանական, մանկավարժական բազմաթիվ հարցերի ուսումնասիրությամբ և մեկնաբանությամբ: Նա աճեցրել ու դաստիարակել է գիտական, մանկավարժական բազմաթիվ կադրեր, որոնց թվում քիչ չեն անվանի գիտնականներ, փորձառու դասախոսներ և այլ ասպարեզի գիտաշխատողներ:

Սակայն ստեղծագործական աշխատանքի ծաղկման շրջանում, 1937 թ. երկրում տիրող մասսայական բռնություններից զերծ չմնաց նաև Գուրգեն էդիլյանը: Անհիմն մեղադրանքով նա տասը տարով աքսորվեց Սիբիր: Կալանավորական անասելի ծանր պայմաններում նա չի դադարում ստեղծագործել և Հայաստան ուղարկել իր երկերը, սակայն նրա դիմում-բողոքները երկրի բարձրագույն դատական օրգաններին մնում են անհետևանք: Ահա մի հատված նրա Հայաստանի դատախազությանը գրած դիմումից. «Նրանց հառաչանքները տանջում էին ինձ և մյուսներին: Բոլոր կալանավորվածները գտնվում էին ծանր հոգեբանական կոշմար վիճակում, վախեցած, տեռորի ենթարկվածի դրության մեջ: Նախկին կալանվածները ինձ ասում էին հետևյալը, այս 1937 թիվը առանձնահատուկ տարեթիվ է ՆԳԺԿ-ի կյանքում, ծեծը, որը նախկինում չի եղել, այժմ դարձել է սովորական երևույթ, նախկինում մեղադրում էին իրական փաստերով, այժմ ոչ, չի կարող այդպես լինել, յուրաքանչյուր ոք կստանա սահմանված պատժաչափը: Յուրաքանչյուր կալանավորված պետք է ընդունի ներկայացված մեղադրանքը կամ ենթարկվելով ծեծի, կամ առանց դրա, եթե կհամաձայնվի քննիչի հետ և կստորագրի կազմած արձանագրությունները և այլն», դիմումը գրված է 1940 թվականի փետրվարի 12-ին:

Գուրգեն էդիլյանը և նրա հարազատները բողոքելով՝ հույս ունեին, որ նրա գործը կվերանայվի, սակայն, 1942 թվականի հունվարի 18-ին, Սիբիրի կալանավայրում 57 տարեկան հասակում նա կնքում է իր մահկանացուն: Եվ միայն 1957 թ. ՀԽՍՀ Գերագույն դատարանի նախագահության ապրիլի 12-ի, թիվ 3/75 որոշմամբ կարճվում է նրա գործը՝ հանցակազմի բացակայության պատճառով:

Այո, այդ դժնդակ տարիների բռնությունների զոհ դարձան բազմաթիվ անմեղ մարդիկ, գիտության, մշակույթի և այլ բնագավառների նշանավոր անձինք, որոնք մտահոգված էին երկրի զարգացման ճակատագրով: Հուսանք, որ այդ դաժանություններն արդեն պատմություն են և երբեք չեն կրկնվի:

Հենրիկ ԽՍՈՍՅԱՆ
Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված



Երկրաշարժ, նորից՝ երկրաշարժ

Նորից երկիր մոլորակն անհանգիստ է. երկրաշարժ Հեռավոր Արևելքում, երկրաշարժ՝ հյուսիսում, երկրաշարժ՝ հարավում:

Օրերս Ալթայում տեղի ունեցած 8,5 բալանոց երկրաշարժի ավերածությունների մասին, ցավոք, պատկերներ չունենք: Բայց, ահա 1999-ի սեպտեմբերի 22-ին Տայվանում տեղի ունեցած երկրաշարժի այս պատկերները տարածվեցին աշխարհով մեկ: Դրանք հասան նաև մեզ, փառք Աստծո, որ մեզ հասան միայն լուսանկարները:



Կոլումբիա տիեզերանավը՝ Քենեդու տիեզերական կենտրոնում

Այդ տիեզերանավի վերջին վթարը և տիեզերագնացների կորուստը լուրջ մտորումների տեղիք տվեց՝ պե՞տք է, արդյոք, շարունակել Կոլումբիա ծրագիրը:

Պարզվեց, որ չնայած զոհերին ու աղետին, ծրագիրը կշարունակվի: Ջորջ Բուշը վերջերս հայտարարեց, թե «սույն դեպքը չի կարող կասեցնել ՆԱՍԱ-ի տիեզերական ծարգիրը և Կոլումբիա տիեզերանավերի թռիչքը»: Այդ նպատակով հավաքվել են վթարի ենթարկված տիեզերանավի մասերը, որոնք կտան վթարի պատճառների մասին վերջնական պատասխան:

Մայրցամաքը կիսվո՞ւմ է

Սիա այսպիսի սենսացիոն միտք է հայտնում ֆրանսիական գիտական հանդեսը, հրապարակելով Անտարկտիդայի այս լուսանկարը: Բանն այն է, որ ըստ «Լյա Ռեշերշ» հանդեսի սույն հրապարակման, սառցե մայրցամաքից մի զգալի մաս անջատվում է հիմնական զանգվածից ու, թեև շատ դանդաղ, շարժվում է դեպի Հնդկական օվկիանոս: Մինչ այդ գիտնականները տագնապել էին, որ Հարավային սառուցյալ զանգվածից հսկա այսբերգների հալոցքի պատճառով կբարձրանա համաշխարհային օվկիանոսը, իսկ ինչ կլինի, եթե այս սառցե լեռնաշխարհը շարժվի դեպի օվկիանոսի խորքերը: Հայտնում ենք մեր ընթերցողներին, որ այս միտքը ընդամենը գիտական վարկած է և նրա իրականություն դառնալը կարող է հազարամյակ տևել, այնպես որ անհանգստանալու առիթ չկա:

Զգուշացե՛ք. զոմբիներ են...

Զոմբիների մասին կան շատ պատմություններ. նրանց գերեզմանային վերապրուկներ՞ են, նրանք, պարզապես, ուրվականներ են, նրանք անդրշիրիմյան աշխարհի ներկայացուցիչներ են..., էլ ինչ ասես չեն պատմում նրանց մասին: Բայց, ահա, ֆրանսիական «Լյա ռեշերշ» գիտական հանդեսը անդրադառնալով այդ թեմային, թեև երկչոտ, բայց հաստատ նշում է, որ մենք գործ ունենք սովորական մարդկանց հետ, որոնց մտածողությունը բնությունից, կամ արհեստական ազդեցությունից այլածն է, ուրի՜շ է: Ընդունված է նաև «զոմբի» անվանել անսիրտ, անհոգի մարդկանց, որոնք դաժան են, զուրկ մարդուն բնորոշ բարությունից, ուշադրությունից՝ ուրիշների, շրջապատի նկատմամբ: Իհարկե, ֆրանսիական հանդեսի հրապարակումը մեզ հիշեցնում է առավել ուշադիր լինել սեփական արարքների, ուրիշների նկատմամբ, հիշելով, թե արդյոք մեր անտաբերությամբ կամ դաժանությամբ մենք ևս «ԶՈՄԲԻ» չենք դիմացինի նկատմամբ: Իզո՞ւր են մարդիկ ասում՝ «նա մարդ չէ, նա հոգի չունի, նա պարզապես զոմբի է»:

Ֆրանսիացի գիտնականները կարծիք են հայտնում, որ նրանք մարդիկ են, որոնք իրենք իրենց չեն պատկանում և օժտված են այնպիսի հատկություններով, որոնք սովորական մահկանացուները չունեն: Նրանք աշխարհին նայում են, աշխարհն ընկալում են իրենց իսկ ֆիքսած պատկերներով:

Սովորական մարդիկ ուրիշ, ավելի ճիշտ, կանխակալ վերաբերմունք ունեն նրանց նկատմամբ, թեև, ըստ մեր տեղեկությունների, չկան մարդիկ, որ հանդիպած լինեն նրանց.

- Սակայն, զգույշ,- ասում են գիտնականները,- որովհետև այդ էակներին պետք է չափազանց զգույշ մոտենալ, քանզի նրանց աշխարհը մեզ համար առեղծված է, անհայտ:

Սկսելով ուսումնասիրությունները և հետևությունները, որ անում են ֆրանսիացի գիտնականները, իրենց իսկ պնդմամբ, 100 տոկոսանոց ճշմարտություն համարել չի կարելի: Համոզված չեն անգամ, թե այն ինչ ասում են, արդյոք, պատրանք չէ:

Եվ, այնուամենայնիվ, գիտնականները շարունակում են ուսումնասիրությունները, չհավակնելով, թե զոմբիների մասին իրենց պատկերացումը, բնութագիրը բացարձակ ճշմարտություն է: Բացառված չէ, անգամ, որ լինի սխալ: Բայց, այնուամենայնիվ, արդեն այն փաստը, որ զոմբիների առեղծվածը հետաքրքրում կամ զբաղեցնում է նաև գիտնականներին, խոսում է այն մասին, որ զոմբիների (ուրվականների, դաժանությամբ տոգորված անդրշիրիմյան աշխարհից եկվորների) թեման արժանի է ուսումնասիրման և ոչ թե արհամարհանքի: Չէ՞, որ մեր շրջապատում էլ քիչ չեն մարդիկ, ովքեր արժանի են կրելու ԶՈՄԲԻ տիտղոսը:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ, հեռախոս՝ 56-80-14:

Դասիչ՝ 69268,
գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 7.10. 2003թ.
"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
թերթը հրատարակվում է հովանավորչական միջոցով: